ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) մասնակից պետությունների սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացման համար տիեզերական գիտության և տեխնիկայի կարևոր նշանակությունը,

ելնելով տիեզերական տարածության յուրացմանն ուղղված՝ ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական և արդյունաբերական ներուժի զարգացման կարևորության ընկալումից,

շահագրգռվածություն արտահայտելով խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման տարբեր ոլորտներում ջանքերի միավորման հարցում,

ընդունելով գիտատեխնիկական և արտադրական համագործակցության վրա հիմնված՝ տիեզերական գործունեության ոլորտում նպատակաուղղված միջազգային համագործակցության գործնական կարևորությունը և դրանից բխող հնարավոր փոխադարձ օգուտները,

առաջնորդվելով «Անկախ Պետությունների Համագործակցության՝ Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման բնագավառում համագործակցության մասին» 2018 թվականի սեպտեմբերի 28-ի Կոնվենցիայով,

հաշվի առնելով «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» 1967 թվականի հունվարի 27-ի պայմանագրի, ինչպես նաև տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման վերաբերյալ միջազգային այլ պայմանագրերի դրույթները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Սահմանումները

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«Ներմուծում»՝ Կողմերի պետությունների պետական սահմանով կամ մաքսային սահմանով դեպի իրենց տարածք այն ապրանքների ցանկացած տեղափոխում, որոնք, սույն Համաձայնագրին համապատասխան, փոխադրվում են համատեղ գործունեության նպատակներով.

«Արտահանում»՝ Կողմերի պետությունների պետական սահմանով կամ մաքսային սահմանով իրենց տարածքից այն ապրանքների ցանկացած տեղափոխում, որոնք, սույն Համաձայնագրին համապատասխան, փոխադրվում են համատեղ գործունեության նպատակներով.

«**Կողմի պետություն»**՝ սույն Համաձայնագրի մասնակից պետություն.

«**գործնական խորհրդապահական տեղեկատվություն**»՝ գիտատեխնիկական, առևտրային, տեխնոլոգիական, արտադրական, ֆինանսա-տնտեսական տեղեկատվություն, այդ թվում՝ արտադրության գաղտնիքներ (նոու-հաու) կազմող տեղեկատվություն՝ անկախ դա ներկայացնելու և կրիչի ձևից, որը համապատասխանում է հետևյալ պայմաններին՝

այդ տեղեկատվությանը տիրապետելը կարող է օգտակար լինել մասնավորապես՝ տնտեսական, գիտական կամ տեխնիկական բնույթի, նաեվ մրցակցության պայմաններում անձանց նկատմամբ առավելություն ձեռք բերելը, որոնք դրան չեն տիրապետում,

այդ տեղեկատվությունը չունի համընդհանուր ճանաչում կամ այլ աղբյուրներից լայն հասանելիություն՝ օրինական հիմքերով,

այդ տեղեկատվության մասին դրան տիրապետողը նախկինում չի տեղեկացրել երրորդ անձանց՝ առանց դրա խորհրդապահական բնույթը պահպանելու պարտավորության,

այդ տեղեկատվությունը չի գտնվում ստացողի տրամադրության տակ՝ առանց դրա խորհրդապահական բնույթը պահպանելու պարտավորության,

այդ տեղեկատվության տիրապետողը ձեռնարկում է դրա խորհրդապահական բնույթն ապահովելու միջոցներ.

«**օրենսդրությամբ լիազորված պաշտոնատար անձինք**»՝ Կողմերից յուրաքանչյուրի պետության ներքին գործերի մարմինների, մաքսային մարմինների և կարանտինային ծառայության այն ծառայողները, արտակարգ իրավիճակների անձնակազմը, դատական կատարածուները և այլ պաշտոնատար անձինք ու երրորդ պետությունների պաշտոնատար անձինք, որոնց գործառույթները նախատեսված են օրենսդրական կարգով, և որոնց, համապատասխանաբար, յուրաքանչյուր Կողմ հատուկ թույլտվություններ է տրամադրում իր իրավասու կամ լիազորված մարմինների միջոցով, ինչպես նաև երրորդ պետության կառավարության կողմից այդ պետությունում ընդունված ընթացակարգերի միջոցով՝ նշելով այն մասին, որ այդպիսի պաշտոնատար անձինք իրենց պետությունների տարածքում և դրանց

օրենսդրությանը համապատասխան իրականացնում են որոշակի գործառույթներ, որոնք կարող են առնչվել համատեղ գործունեությանը.

«**ներմուծող Կողմ»**՝ այն Կողմը, որի պետության տարածք կատարվում է ապրանքների ներմուծում.

«**մտավոր սեփականություն**»՝ այն մտավոր սեփականությունը, որը սահմանվում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը հիմնադրող՝ 1967 թվականի հուլիսի 14-ի Կոնվենցիայի 2-րդ հոդվածին համապատասխան.

«**տեղեկատվություն**»՝ ցանկացած տեղեկություն (անկախ ներկայացնելու և կրիչի ձևից)՝ անձանց, առարկաների, փաստերի, իրադարձությունների, երևույթների և գործընթացների մասին՝ ներառյալ առևտրային և ֆինանսական բնույթի տեղեկությունները, գիտական և տեխնիկական տվյալները, որոնք առնչվում են համատեղ գործունեությանը, դրա իրականացման ընթացքին և ստացված արդյունքներին.

«**բեռն առաքողներ**»՝ ֆիզիկական կամ իրավաբանական ցանկացած անձ, որին, իր պետության օրենսդրությանը համապատասխան, տրամադրվել են լիցենզիաներ և (կամ) այլ թույլտվություններ՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ներմուծման և (կամ) արտահանման համար.

«**հսկողություն»**՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների արտահանմանը կամ վերաարտահանմանը ներկայացվող ցանկացած պահանջ կամ պայման (ներառյալ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների արտահանման լիցենզիաները, այլ թույլտվություններ, դրանց հասանելիության մասով հաշվառում վարելու և հաշվետվողականության պահանջները), որը համապատասխանում է արտադրատեսակների և տեխնոլոգիաների արտահանման հսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակներին և դրանց պահպանությանն ուղղված միջոցներին.

«**խորհրդապահական տեղեկատվություն»**՝ գաղտնի տեղեկատվություն չհամարվող՝ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկատվություն, որը պատշաճ կերպով պահպանվում է Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան և այնպիսի կրիչների վրա, որոնց վրա զետեղվում է «Ծառայողական օգտագործման համար» նշումը.

«**պահպանվող արտադրատեսակներ և տեխնոլոգիաներ»**՝ ցանկացած ապրանք, որն առարկա, նյութ, մատակարարվող կամ պատրաստվող արտադրանք է՝ ներառյալ տարբեր նշանակության սարքավորումները, ցանկացած տեխնոլոգիա, մասնավորապես՝ գյուտերը, օգտակար մոդելները, նոու-հաուն, արդյունաբերական նմուշները և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար ծրագրերը, այդ թվում՝ տեխնիկական տվյալների կամ տեխնիկական աջակցության տեսքով, և (կամ) ցանկացած ձևով տեղեկատվություն (ընդհանուր հասանելիության

տեղեկատվությունից բացի) պարունակող՝ ներառյալ գրավոր և բանավոր տեղեկատվությունը, պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տեխնիկական նախագծման, կառուցման, նախամշակման, արտադրության, մշակման, պատրաստման, օգտագործման, շահագործման, կապիտալ նորոգման, ընթացիկ նորոգման, տեխնիկական սպասարկման, ձևափոխման, դրանց բնութագրերի կատարելագործման կամ արդիականացման համար անհրաժեշտ տեխնիկական նախագծերը, գծագրերը, լուսանկարները, տեսանյութերը, պլանները, ցուցումները և փաստաթղթերը, որոնց առնչությամբ լիազորված մարմիններն արտահանման լիցենզիաներ են տրամադրում, և (կամ) որոնց առնչությամբ որևէ Կողմ տրամադրում է մեկ այլ Կողմի պետության տարածք արտահանման համար նախատեսված այլ թույլտվություններ, և որոնց նկատմամբ արտահանող Կողմը հսկողություն է իրականացնում իր իրավասու մարմնի և (կամ) լիազորված մարմնի միջոցով՝ արտահանող Կողմի պետության օրենսդրությանը համապատասխան և սույն Համաձայնագրի հիման վրա.

«**մտավոր գործունեության արդյունքների գնահատման և օգտագործման պլաններ**»՝ համատեղ գործունեության մասնակիցների որոշակի պլաններ, որոնք առնչվում են համատեղ գործունեության կամ համատեղ ուսումնասիրության իրականացմանը, նրանց համապատասխան իրավունքներին և պարտավորություններին, որոնց շարքում մտավոր սեփականության առնչությամբ, մասնավորապես, սահմանվում են մտավոր գործունեության՝

համատեղ ստեղծված արդյունքների նկատմամբ իրավունքների, այդ թվում՝ գիտական և հետազոտական նպատակներով բաշխման և օգտագործման, ինչպես նաև դրանց տարածման կարգը՝ ներառյալ համատեղ հրապարակումների վերաբերյալ պայմանավորվածությունները,

հետազոտողների և գիտնականների իրավունքներն ու պարտականությունները,

Կողմերի և (կամ) համատեղ գործունեության մասնակիցների համապատասխան ներդրումները՝ ներառյալ նախորդող մտավոր սեփականությունը, որը փոխանցվել է համատեղ գործունեություն իրականացնելու շրջանակներում,

մտավոր գործունեության օգտագործվող արդյունքների ցանկը և Կողմերի պետությունների տարածքում ու, անհրաժեշտության դեպքում՝ երրորդ պետությունների տարածքում, դրանց օգտագործման կարգը,

գիտական հետազոտությունների պահպանվող արդյունքների նկատմամբ իրավունքների տրամադրման և փոխանցման կարգը,

մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների լիցենզավորման և փոխանցման կարգը.

«**տեխնոլոգիաների պահպանության պլաններ**»՝ այն պլանները, որոնք գրավոր ցուցումների կամ կատարման համար պարտադիր այլ դրույթների տեսքով

պարունակում են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների՝ մշտական հիմունքներով ֆիզիկական և իրավական պաշտպանության պահանջների պահպանմանն ուղղված կոնկրետ միջոցների մանրամասն շարադրանքը՝ ներառյալ արտակարգ իրավիճակների դեպքում հատուկ պայմաններն ու սահմանափակումները, ինչպես նաև՝ բոլոր այն օբյեկտներին, շինություններին, տրանսպորտային միջոցներին կամ դրանց առանձին գոտիներին առնչվող գործառնությունների նկարագիրը, որտեղ գտնվում են պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները՝ նշելով այդ վայրերի անվտանգության և մուտքի թույլտվության ընթացակարգերը.

«**նախորդող մտավոր սեփականություն**»՝ նախքան համատեղ գործունեության իրականացումն սկսելը ստացված և Կողմերից որևէ մեկի պետությանը կամ համատեղ գործունեության մասնակիցներին պատկանող մտավոր սեփականություն, կամ ինքնուրույն գործունեություն կամ ինքնուրույն հետազոտություն իրականացնելու արդյունք հանդիսացող այնպիսի մտավոր սեփականություն, որի օգտագործումն անհրաժեշտ է համատեղ գործունեություն իրականացնելու համար.

«**արտահանող (ներմուծող) Կողմի ներկայացուցիչներ**»՝ Կողմի պետությունում պետական ծառայության մեջ գտնվող ֆիզիկական անձինք և (կամ) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնք այդ Կողմի և (կամ) նրա իրավասու կամ լիազորված մարմնի կողմից լիազորված են իրականացնելու պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող համատեղ գործունեություն՝ ներառելով Կողմի և (կամ) նրա իրավասու և (կամ) լիազորված մարմնի՝ սահմանված կարգով լիազորված ցանկացած ներկայացուցչի, բեռն առաքողներին, նշանակված մարմիններին և կազմակերպություններին, դրանց ծառայողներին, ներկայացուցիչներին, կապալառուներին կամ ենթակապալառուներին, որոնք Կողմի պետությունում արտահանման (ներմուծման) լիցենզիաների և (կամ) այլ թույլտվությունների տրամադրման հետ կապված՝ մասնակցում են պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող համատեղ գործունեությանը, և (կամ) նրանց համար հասանելի են կամ կարող են հասանելի լինել պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները, ինչպես նաև նրանք տիրապետում են պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող հարցերում հմտություններին ու արհեստավարժ և գտնվում են այդ Կողմի պետության իրավազորության և (կամ) հսկողության ներքո.

«**երրորդ պետության ներկայացուցիչներ**»՝ երրորդ պետությունում պետական ծառայության մեջ գտնվող ֆիզիկական անձինք և (կամ) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնք երրորդ պետության կառավարության և (կամ) երրորդ պետության պետական մարմնի կողմից լիազորված են իրականացնելու պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող համատեղ

գործունեություն՝ ի կատարումն սույն Համաձայնագրի՝ վերջինիս անբաժանելի մասը կազմող 3-րդ հավելվածի 1-ին բաժնի 2-րդ կետով նախատեսված համաձայնագրերի և պայմանավորվածությունների՝ ներառելով երրորդ պետության՝ սահմանված կարգով լիազորված ցանկացած ներկայացուցիչ, որը մասնակցում է պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող համատեղ գործունեությանը, և (կամ) որի համար հասանելի են կամ կարող են հասանելի լինել պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները, և որը գտնվում է երրորդ պետության իրավազորության և (կամ) հսկողության ներքո.

«**մտավոր գործունեության արդյունքներ**»՝ գիտության, գրականության և արվեստի գործեր, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար ծրագրեր, տվյալների բազաներ, կատարումներ, հնչյունագրեր, եթերային ռադիո- կամ մալուխային հեռարձակման հաղորդումներ (եթերային կամ մալուխային հեռարձակման կազմակերպությունների կողմից հեռարձակում), գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, սելեկցիոն նվաճումներ, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաներ, արտադրության գաղտնիքներ (նոու-հաու).

«**վերաարտահանող Կողմ**»՝ ներմուծող այն Կողմը, որի պետության տարածքից համատեղ գործունեություն իրականացնելու նպատակով իրականացվում է պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետագա փոխանցումը երրորդ պետություն՝ արտահանող Կողմի լիազորված մարմինների կողմից տրամադրված արտահանման լիցենզիաների (թույլտվությունների) և (կամ) արտահանող Կողմի այլ թույլտվությունների համաձայն՝ մի կողմից, և երրորդ պետության օրենսդրության համապատասխան՝ լիազորված մարմինների կողմից տրամադրված ներմուծման լիցենզիաների (թույլտվությունների) և (կամ) երրորդ պետության կառավարության այլ թույլտվությունների համաձայն՝ մյուս կողմից.

«**գաղտնի տեղեկատվություն**»՝ այն տեղեկատվությունը, որը պարունակում է Կողմերի պետություններից որևէ մեկի պետական գաղտնիքներ (պետական գաղտնիք) կազմող տեղեկություններ, և որի չթույլատրված տարածումը կարող է վնաս հասցնել այդ պետության անվտանգությանն ու շահերին.

«**համատեղ գործունեություն**»՝ ի կատարումն սույն Համաձայնագրի իրականացվող այն գործունեությունը, որը կապված է խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման, ինչպես նաև տիեզերական տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառման հետ, և որը, որպես այդպիսին, սահմանված է համաձայնագրերում (պայմանագրերում)՝ ներառելով պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող համատեղ գործունեությունը.

«**համատեղ ստեղծված մտավոր սեփականություն**»՝ համատեղ գործունեություն իրականացնելու արդյունքում ստեղծված մտավոր սեփականություն.

«**պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող համատեղ գործունեություն**»՝ պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվելու վերաբերյալ բոլոր այն գործողությունները, որոնք կապված են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տեխնիկական նախագծման, կառուցման, նախամշակման, արտադրության, մշակման, պատրաստման, օգտագործման, շահագործման, կապիտալ նորոգման, ընթացիկ նորոգման, տեխնիկական սպասարկման, ձևափոխման, դրանց բնութագրերի կատարելագործման կամ արդիականացման հետ՝ ներառելով տեխնիկական հարցերի քննարկումը, ցանկացած հատուկ փաստաթղթի հետ առնչություն ունենալու բոլոր փուլերը, էսքիզային նախագծերի նախապատրաստումը, նախագծային-կոնստրուկտորական աշխատանքների կատարումը, ցանկացած համակարգի և ագրեգատի նախամշակումը, պատրաստումը, մատակարարումը, մոնտաժումը, տեխնիկական սպասարկումը, շահագործումը, տրանսպորտային փոխադրումը և պահպանումը, տեխնիկական ձեռնարկի ապահովումը և շահագործման ու շուկայահանման գծով ծառայությունների մատուցումը.

«**անհատականացման միջոցներ**»՝ ապրանքների ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ և սպասարկման նշաններ, դրանց ծագման տեղանուններ, առևտրային նշագրեր.

«**ապրանքներ**»՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտմանը և օգտագործմանն առնչվող այնպիսի արտադրատեսակներ (առարկաներ, նյութեր և արտադրանք), ինչպիսիք են տիեզերական ապարատները և տիեզերական ապարատներն ուղեծիր դուրս բերելու միջոցները, դրանց տարրերը, բաղադրիչները և պահեստային մասերը, սարքերը, սարքավորումները հսկիչ, փորձարկման և տեխնոլոգիական սարքավորումները, այդ թվում՝ դրանց առնչվող՝ տեխնոլոգիապես անբաժանելի բնական կամ արհեստական նյութերը, մատակարարվող կամ պատրաստվող արտադրանքը, նյութական կրիչների վրա ամրագրված տեղեկատվության և տվյալների ձևով տեխնոլոգիաները, հետազոտության, հետազննության կամ մշակման արդյունքում ստացված փորձարարական-կոնստրուկտորական և գիտահետազոտական մշակումները, ինչպես նաև ցանկացած նյութական ձևով այլ տեղեկատվություն, այդ թվում՝ արտադրական փաստաթղթեր և տեխնիկական բնութագրեր, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքներ և դրանց հավասարեցված անհատականացման միջոցներ, ինչպես նաև այն արտադրանքը (արտադրատեսակները), որով դրանք արտահայտված են, և նախագծային-կոնստրուկտորական փորձնական մշակումներ.

«**երրորդ պետություն**»՝ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետություն.

«**արտահանող (ներմուծող) Կողմի լիազորված պաշտոնատար անձինք**»՝ արտահանող (ներմուծող) Կողմի այն ներկայացուցիչները և (կամ) պաշտոնատար այլ անձինք, որոնք արտահանող (ներմուծող) Կողմից և (կամ) նրա իրավասու կամ լիազորված մարմնից ստացել են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների շրջանառության նկատմամբ որոշակի հսկողական գործառույթներ կատարելու հատուկ թույլտվություններ.

«**լիազորված մարմիններ**»՝ պետական մարմիններ, որոնք, իրենց պետության օրենսդրությանը համապատասխան, իրավասու են տրամադրելու պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների արտահանման լիցենզիաներ կամ դրանց ներմուծման (արտահանման) այլ թույլտվություններ, ինչպես նաև իրականացնելու դրանց հետ առնչվելու նկատմամբ հսկողություն.

«**համատեղ գործունեության մասնակիցներ**»՝ այն իրավասու մարմինները, նշանակված մարմինները և կազմակերպությունները, ինչպես նաև իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձինք, նրանց ներկայացուցիչները, կապալառուներն ու ենթակապալառուները, բեռն առաքողները, որոնք, իրենց պետության օրենսդրության համապատասխան, Կողմի և (կամ) նրա իրավասու մարմինների կողմից լիազորված են իրականացնելու համատեղ գործունեություն սույն Համաձայնագրի շրջանակներում.

«**արտահանող Կողմ**»՝ այն Կողմը, որի պետության տարածքից կատարվում է ապրանքների արտահանում:

Հոդված 2
Նպատակները

Սույն Համաձայնագրի նպատակներն են խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում բազմակողմ համագործակցության իրավական և կազմակերպական հիմքերը սահմանելը, ինչպես նաև համատեղ տիեզերական գործունեության որոշակի ուղղությունների մասով համաձայնագրեր ու այլ պայմանավորվածություններ մշակելու և դրանք Կողմերի ու համատեղ գործունեության մասնակիցների միջև կնքելու համար իրավական հիմքի ստեղծմանն աջակցելը:

Հոդված 3
Իրավական հիմքը

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան և միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների ու նորմերի

պահպանմամբ:

Սույն Համաձայնագրով չեն շոշափվում Կողմերից յուրաքանչյուրի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք այդ Կողմի համար բխում են այնպիսի այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից է նրա պետությունը:

Հոդված 4
Համագործակցության ոլորտները

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ոլորտներում.

տիեզերական տարածության հետազոտում՝ ներառելով աստղաֆիզիկական հետազոտությունները, մոլորակների և աստերոիդային-երկնաքարային վտանգի ուսումնասիրությունը,

տիեզերական ապարատների և դրանք ուղեծիր դուրս բերելու միջոցների, դրանց տարրերի, սարքերի և սարքվածքների մշակում,

վերգետնյա տիեզերական ենթակառուցվածքի ստեղծում ու զարգացում,

Երկրի հեռահար զոնդավորում,

արբանյակային նավիգացիոն համակարգեր, տեխնոլոգիաներ և ծառայություններ,

տիեզերական միջավայրի պաշտպանություն՝ ներառյալ վերջինիս վրա տեխնածին ազդեցության հետևանքների նկատմամբ հսկողությունը, դրանց կանխարգելումն ու նվազեցումը (վերացումը),

արձակումների իրականացման մասով ծառայությունների տրամադրում,

տիեզերական գործունեության արդյունքների կիրառում ԱՊՀ մասնակից պետությունների գիտական, տնտեսական և սոցիալական ոլորտներում,

հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ՝ փորձարկվող տիեզերական համալիրների օգտագործմամբ,

տիեզերական գործունեություն իրականացնելիս շրջակա միջավայրի էկոլոգիական անվտանգության և պահպանության ապահովում,

փորձնական տիեզերական թռիչքներ,

տիեզերական ոլորտի համար կադրերի պատրաստում և վերապատրաստում:

Գրավոր փոխադարձ պայմանավորվածությամբ Կողմերը, սույն Համաձայնագրին համապատասխան, կարող են լրացուցիչ սահմանել համագործակցության այլ ոլորտներ:

Հոդված 5
Համագործակցության ձևերը

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

համատեղ ծրագրերի և նախագծերի պլանավորում ու իրականացում,

գիտական և տեխնիկական տեղեկատվության, տիեզերական գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի տարբեր ոլորտներում գիտելիքների, փորձարարական տվյալների, փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների արդյունքների և նյութերի փոխանակում,

խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման պետական ծրագրերի, ինչպես նաև տիեզերական տեխնոլոգիաների գործնական կիրառման ու տիեզերական ենթակառուցվածքի զարգացման ոլորտում միջազգային ծրագրերի և նախագծերի հասանելիության ապահովմանը փոխադարձ աջակցություն,

վերգետնյա օբյեկտների և համակարգերի օգտագործում՝ տիեզերական ապարատների արձակումների ու դրանց կառավարման համար,

կադրերի պատրաստման ծրագրերի կազմակերպում, մասնագետների և գիտնականների փոխանակում,

գիտաժողովների, համաժողովների և նմանատիպ այլ միջոցառումների անցկացում,

մասնագիտացված ցուցահանդեսներին, տոնավաճառներին և նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցություն,

տիեզերական տեխնոլոգիաների և ծառայությունների միջազգային շուկայում գործընկերության տարբեր ձևերի զարգացում,

տիեզերական գործունեություն իրականացնելիս տեխնիկական աջակցության և օգնության փոխադարձ տրամադրում,

տիեզերական ոլորտում ազգային նորմատիվ իրավական ակտերի, այդ թվում՝ Կողմերի տեխնիկական նորմատիվ իրավական ակտերի ներդաշնակեցում:

Փոխադարձ պայմանավորվածությամբ Կողմերը, սույն Համաձայնագրին համապատասխան, կարող են գրավոր լրացուցիչ սահմանել համագործակցության այլ ձևեր:

Հոդված 6
Համատեղ գործունեության համակարգումը

Սույն Համաձայնագրի կատարմանն ուղղված համատեղ գործունեության համակարգումը վերապահվում է տիեզերքի հարցերով Միջպետական խորհրդին: Նրա խնդիրները, գործառույթները և գործունեության կարգը սահմանված են «Տիեզերքի հարցերով Միջպետական խորհրդի մասին» դրույթով, որը սույն

Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում (Հավելված 1):

Հոդված 7
Իրավասու մարմինները, նշանակված մարմինները և կազմակերպությունները

1. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարված լինելու մասին ծանուցումն ուղարկելու հետ միաժամանակ Կողմերը սույն Համաձայնագրի ավանդապահին տեղեկացնում են նշանակված իրավասու մարմինների մասին: Կողմերից յուրաքանչյուրն ավանդապահին գրավոր ծանուցում է իրավասու մարմինների փոփոխությունների մասին:

2. Իրենց պետությունների օրենսդրության համապատասխան՝ Կողմերը կամ նրանց իրավասու մարմինները սահմանված կարգով կարող են նշանակել իրենց պետությունների պետական մարմիններին և (կամ) կազմակերպություններին՝ համագործակցության առանձին ծրագրերի և նախագծերի շրջանակներում մասնագիտացված գործունեության տեսակներ իրականացնելու համար՝ ի կատարումն սույն Համաձայնագրի (այսուհետ՝ նշանակված մարմիններ և կազմակերպություններ):

Որպես նշանակված կազմակերպություններ՝ կարող են հանդես գալ պետական, մասնավոր և այլ կազմակերպություններ, որոնք գրանցված են և գործունեություն են իրականացնում Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան:

3. Կողմերը և նրանց իրավասու մարմինները, նշանակված մարմինները և կազմակերպությունները, ի կատարումն սույն Համաձայնագրի, աջակցում են իրենց պետությունների պետական և մասնավոր կազմակերպությունների միջև համագործակցության կայացմանն ու զարգացմանը, այդ թվում՝ երրորդ պետությունների կազմակերպությունների, ինչպես նաև՝ միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ:

4. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության կոնկրետ ծրագրերի և նախագծերի իրականացման կազմակերպական, ֆինանսական, իրավական և տեխնիկական պայմանները համատեղ գործունեության մասնակիցների միջև առանձին համաձայնագրերի (պայմանագրերի) կամ (անհրաժեշտության դեպքում՝ նաև հաշվի առնելով Կողմերի պետությունների միջազգային պարտավորությունները) անմիջապես Կողմերի միջև առանձին համաձայնագրերի առարկա են (այսուհետ՝ առանձին համաձայնագրեր):

5. Ի կատարումն սույն Համաձայնագրի՝ համատեղ գործունեության մասնակիցներն անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծել համատեղ աշխատանքային խմբեր և (կամ) աշխատանքային այլ մարմիններ՝ ծրագրերի և

նախագծերի իրականացման համար, ինչպես նաև համագործակցության նոր ոլորտների և ձևերի ու փոխգործակցության մեխանիզմների զարգացման վերաբերյալ առաջարկները նախապատրաստելու համար:

Հոդված 8
Ֆինանսավորումը

1. Սույն Համաձայնագիրը կիրարկելիս համատեղ գործունեության ֆինանսավորումն իրականացվում է շահագրգիռ Կողմերի կողմից՝ համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների համար նախատեսվող ազգային բյուջեների միջոցների սահմաններում, ինչպես նաև արտաբյուջետային աղբյուրներից:

2. Սույն Համաձայնագիրը կիրարկելիս համատեղ գործունեության ֆինանսավորումն ազգային բյուջեների հաշվին Կողմերի կողմից իրականացվում է Կողմերի պետություններից յուրաքանչյուրի՝ բյուջետային կարգավորմանն առնչվող օրենսդրության համաձայն և այդ նպատակների համար հատկացված ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Որևէ Կողմի՝ իր պարտավորությունները կատարելու առնչությամբ ֆինանսավորման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում նշված Կողմը, գործելով իր իրավասու մարմնի միջոցով, այդ մասին ծանուցում է մյուս Կողմերի իրավասու մարմիններին՝ խորհրդակցություններ անցկացնելու համար:

3. Կողմերը պատասխանատվություն չեն կրում համատեղ գործունեության մասնակիցների միջև կնքված առանձին համաձայնագրերի արդյունք հանդիսացող ցանկացած ֆինանսական պարտավորության համար՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

Հոդված 9
Մտավոր սեփականությունը

1. Կողմերն ապահովում են սույն Համաձայնագրի շրջանակներում ստեղծվող կամ օգտագործվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների համարժեք և արդյունավետ պահպանություն՝ իրենց պետության օրենսդրությանը, նրա միջազգային պարտավորություններին և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

2. Կողմերն ու համատեղ գործունեության մասնակիցներն առանձին համաձայնագրերում մասնավորեցնում են այն մտավոր սեփականությանն առնչվող՝ պահպանման ենթակա դրույթները, որն օգտագործվում է համատեղ գործունեության իրականացման շրջանակներում և (կամ) համարվում է այդպիսի գործունեության արդյունք՝ պահպանելով սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող 2-րդ

հավելվածով նախատեսված սկզբունքներն ու նորմերը:

Հոդված 10
Տեղեկատվության փոխանակումը

1. Կողմերն իրենց իրավասու մարմինների միջոցով աջակցում են համատեղ գործունեությանն առնչվող տեղեկատվության փոխադարձ փոխանակմանը՝ սույն Համաձայնագրին և իրենց պետության օրենսդրությանը համապատասխան: Յուրաքանչյուր Կողմը և համատեղ գործունեության մասնակիցները ապահովում են մյուս Կողմերի և դրանց համատեղ գործունեության մասնակիցների համար գիտական հետազոտությունների և աշխատանքների արդյունքների հասանելիությունը:

2. Կողմերն իրականացնում են տարածման սահմանափակումներ չունեցող տեղեկատվության, ինչպես նաև խորհրդապահական տեղեկատվության փոխանակում՝ իրենց պետությունների օրենսդրությանը, սույն Համաձայնագրի դրույթներին և միջազգային այլ ակտերին համապատասխան:

3. Կողմերից յուրաքանչյուրը և համատեղ գործունեության մասնակիցները պահպանում են մյուս Կողմից և համատեղ գործունեության մասնակիցներից ստացված խորհրդապահական տեղեկատվությունը՝ իրենց պետության օրենսդրությանը համապատասխան: Առանձին համաձայնագրերով նախատեսվում են խորհրդապահական տեղեկատվության պաշտպանությունն ու այն պայմանները, որոնց հիման վրա այդ խորհրդապահական տեղեկատվությունը կարող է փոխանցվել համատեղ գործունեության մասնակիցներին, երրորդ պետության կամ միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ կապալառուների և ենթակապալառուների ցանկացած ներկայացուցչի:

Առանձին համաձայնագրերով անհրաժեշտության դեպքում նախատեսվում է խորհրդապահական տեղեկատվության պաշտպանության մասով պարտավորությունների պահպանմանն ուղղված՝ համատեղ գործունեության մասնակիցների նկատմամբ անհրաժեշտ բոլոր լրացուցիչ միջոցների ընդունում:

4. Խորհրդապահական տեղեկատվությունը սահմանելու պատասխանատվությունը վերապահվում է այն Կողմին կամ համատեղ գործունեության այն մասնակցին, որի տեղեկատվության համար նման խորհրդապահություն է պահանջվում: Կողմերը և համատեղ գործունեության մասնակիցները ձեռնարկում են խորհրդապահական տեղեկատվություն պարունակող ամբողջ նամակագրության խորհրդապահական բնույթն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Կողմերից յուրաքանչյուրն իր համատեղ գործունեության մասնակիցներին պարտավորեցնում է նվազագույնի հասցնել այն անձանց թիվը, ում համար հասանելի է սույն Համաձայնագրի կատարման ընթացքում համատեղ գործունեության մասնակիցների կողմից միմյանց փոխանցվող խորհրդապահական տեղեկատվությունը՝ այդ իրազեկ անձանց շրջանակը սահմանափակելով իր պետության քաղաքացի հանդիսացող այն աշխատակիցներով և մասնագետներով, ում այդ տեղեկատվության հասանելիությունն անհրաժեշտ է՝ սույն Համաձայնագրով նախատեսված նպատակներով իրենց ծառայողական պարտականությունները կատարելու համար:

5. Ո՛չ Կողմերից և ո՛չ համատեղ գործունեության մասնակիցներից որևէ մեկը երրորդ պետության կամ միջազգային կազմակերպությունների որևէ ներկայացուցչի չի բացահայտում և չի փոխանցում սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված՝ ցանկացած մյուս Կողմից և (կամ) նրա համատեղ գործունեության մասնակցից ստացված տեղեկատվությունը, եթե Կողմերը և դրանց համատեղ գործունեության մասնակիցները գրավոր, փոխադարձ հիմունքներով այլ բանի շուրջ պայմանավորվածություն ձեռք չեն բերում:

6. Սույն Համաձայնագրում ոչինչ չի դիտարկվում որպես սույն Համաձայնագրի շրջանակներում որևէ տեղեկատվություն փոխանցելու՝ Կողմերից որևէ մեկի պարտավորություն կամ, ընդհանուր առմամբ, համատեղ գործունեության շրջանակներում տեղեկատվության ցանկացած այլ փոխանցման համար որևէ հիմք, եթե այդ փոխանցումը հակասում է իր պետության անվտանգության շահերին:

Եթե ցանկացած Կողմի պետությունում գաղտնի տեղեկատվության կատեգորիային դասվող որոշակի տեղեկատվության փոխանցումը Կողմերն անհրաժեշտ են համարում սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեություն իրականացնելու համար, ապա այդ տեղեկատվության փոխանցման և դրա հետ առնչվելու կարգը կանոնակարգվում է Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությամբ, գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին Կողմերի միջև կնքված համաձայնագրերով, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, Կողմերի միջև գրավոր կնքված առանձին այլ համաձայնագրերով:

7. Կողմերից յուրաքանչյուրի համատեղ գործունեության մասնակիցները սահմանում են պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող տեխնիկական տվյալների այն ցանկերը, որոնք նրանք նախատեսում են փոխանակել: Այդ ցանկերը ենթակա են սահմանված կարգով հաստատման փոխանցող Կողմի իրավասու մարմինների և լիազորված մարմինների կողմից:

Հոդված 11

Գույքի պաշտպանությունը և տեխնոլոգիաների պահպանությանն ուղղված միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ, հաշվի առնելով իր պետության օրենսդրությունը, ապահովում է մյուս Կողմերից և նրանց համատեղ գործունեության մասնակիցներից յուրաքանչյուրի շահերի պաշտպանումը, որոնք կապված են համատեղ գործունեության շրջանակներում այդ Կողմի պետության տարածքում գտնվող նրանց գույքի իրավական և ֆիզիկական պաշտպանության հետ, այդ թվում՝ ապրանքների փոխադարձաբար նախատեսված կատեգորիաների պաշտպանություն առգրավման ցանկացած ձևի և տեսակի կամ կատարողական վարույթի նկատմամբ: Համատեղ գործունեություն իրականացնելու շրջանակներում օգտագործվող գույքի պատշաճ պաշտպանությունը կարող է լրացուցիչ նախատեսվել առանձին համաձայնագրերում:

2. Համատեղ գործունեության որոշակի տեսակների իրականացման նպատակով Կողմերը անհրաժեշտության դեպքում կնքում են տեխնոլոգիաների պահպանությանն ուղղված միջոցների մասին համաձայնագրեր և (կամ) իրավասու ու լիազորված մարմինների միջոցով աջակցում են համատեղ գործունեության մասնակիցներին դրանց կնքման հարցում՝ նախատեսելով հատուկ պայմաններ, ուղղված՝

արտահանվող պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ցանկացած չթույլատրված հասանելիությունը ու ներմուծող Կողմից դրանց հետագա չթույլատրված փոխանցումը ներմուծող Կողմի և (կամ) համատեղ գործունեության մասնակիցների կողմից կանխելուն, ինչպես նաև պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների՝ ոչ ըստ նշանակության արտահանում իրականացնելը և (կամ) արտահանողի կամ ներմուծողի (վերջնական օգտագործողի) կողմից դրանք ոչ նպատակային օգտագործելը կանխելուն.

պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանվածության ու անվտանգության արդյունավետ ապահովման և դրանց առնչվելու կարգի նկատմամբ հսկողության մասով Կողմերի պետությունների ներկայացուցիչների կողմից պատշաճ գործառույթներ իրականացնելուն.

տեխնոլոգիաների պահպանության որոշակի պլաններ մշակելուն և կատարելուն:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթների իրականացման նպատակով Կողմերն իրենց իրավասու և լիազորված մարմինների միջոցով ապահովում են տեխնոլոգիաների պահպանությանն ուղղված՝ սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածով նախատեսված միջոցների գործնական կիրառումը:

Հոդված 12
Արտահանման հսկողությունը

Կողմերը գործում են արտահանման հսկողության ոլորտում իրենց պետությունների օրենսդրության համապատասխան՝ այն ապրանքների և ծառայությունների մասով, որոնք ներառված են Կողմերի պետություններից յուրաքանչյուրի արտահանման հսկողության ցուցակներում և ցանկերում:

Սույն Համաձայնագրին համապատասխան համագործակցության ցանկացած ձևի շրջանակներում Կողմերի կամ համատեղ գործունեության մասնակիցների կողմից միմյանց ապրանքների փոխանցումը և ծառայությունների մատուցումն արտահանողի, ներմուծողի կամ ցանկացած երրորդ պետության տարածքում իրականացվում է Կողմերի պետություններից յուրաքանչյուրի՝ արտահանման հսկողությանն առնչվող օրենսդրության համապատասխան:

Հոդված 13
Մաքսային կարգավորումը

1. Այն ապրանքները, որոնց ներմուծումը և (կամ) արտահանումն իրականացվում են սույն Համաձայնագրի շրջանակներում, ենթակա են մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսատուրքերից և հարկերից ազատման, եթե դա նախատեսված է Կողմերի պետությունների օրենսդրությամբ և միջազգային այն պայմանագրերի շրջանակներում Կողմերի ունեցած պարտավորություններով, որոնց մասնակից են իրենք:

Յուրաքանչյուր դեպքում նախքան ապրանքների ներմուծումը և (կամ) արտահանումը. որն իրականացվում է սույն Համաձայնագրի և (կամ) սույն Համաձայնագրի կիրարկման նպատակով կնքվող առանձին համաձայնագրերի շրջանակներում, իրավասու մարմիններն իրենց պետությունների մաքսային մարմիններ են ներկայացնում տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում միջազգային համագործակցության, այդ թվում՝ տիեզերական ապարատների արձակման մասով ծառայությունների մատուցման շրջանակներում ապրանքների նպատակային նշանակության, դրանց անվանացանկի և քանակի մասին հաստատումը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված՝ մաքսատուրքերից և հարկերից ազատումը շնորհվում է Կողմերի պետությունների օրենսդրությանը և այն միջազգային պայմանագրերի շրջանակներում Կողմերի ունեցած պարտավորություններին համապատասխան, որոնց մասնակից են նրանք, և այն ապրանքների առնչությամբ, որոնք նրանց տարածք կամ նրանց մաքսային տարածք են ներմուծվում երրորդ պետություններից և (կամ) նրանց տարածքից կամ նրանց մաքսային տարածքից երրորդ պետություններ են արտահանվում՝ անկախ դրանց ծագման երկրից՝ ներառյալ այն ապրանքները, որոնք ներմուծվում և (կամ)

արտահանվում են բազմակողմ համաձայնագրերի կամ համագործակցության ծրագրերի և նախագծերի շրջանակներում, ինչպես նաև այն միջազգային պայմանագրերով Կողմերի ունեցած պարտավորությունների շրջանակներում, որոնց մասնակից են Կողմերը և (կամ) Կողմերի համատեղ գործունեության մասնակիցները, և որոնք իրականացվում են՝ ի կատարումն սույն Համաձայնագրի:

3. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում ենթաակցիզային ապրանքների վրա:

Հոդված 14
Պատասխանատվությունը

1. Կողմերը փոխադարձ հիմունքներով հրաժարվում են պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ ցանկացած պահանջ միմյանց ներկայացնելուց, և, համապատասխանաբար, յուրաքանչյուր Կողմ ցանկացած մյուս Կողմի և նրա համատեղ գործունեության մասնակիցներին չի ներկայացնում որևէ դժգոհություն՝ կապված Կողմերից յուրաքանչյուրի սեփական անձնակազմի անձանց և (կամ) սեփական գույքին վնաս հասցնելու հետ՝ սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեությանն այդպիսի անձանց մասնակցության և այդպիսի գույքի օգտագործման առնչությամբ:

2. Կողմերը և (կամ) իրավասու մարմինները փոխադարձ հիմունքներով և Կողմերի պետությունների օրենսդրության պահպանմամբ կիրառում են պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ պահանջներ ներկայացնելուց փոխադարձ հրաժարման սկզբունքի իրականացման ընթացակարգեր՝ համաձայնեցված գործելակերպի միջոցով, որի համաձայն՝ Կողմերից յուրաքանչյուրը և նրա համատեղ գործունեության մասնակիցները մյուս Կողմերին և նրանց համատեղ գործունեության մասնակիցներին փոխադարձ հիմունքներով չեն ներկայացնում որևէ դժգոհություն կամ հայց այն վնասի կապակցությամբ, որը չկանխամտածված կերպով կարող է հասցվել նրանց սեփական գույքին և (կամ) նրանց սեփական անձնակազմի անձանց:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված՝ պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ պահանջներ ներկայացնելուց հրաժարվելու սկզբունքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ Կողմերը, նրանց համատեղ գործունեության մասնակիցները, նրանց անձնակազմի անձինք կամ նրանց գույքը, որոնք վնաս են հասցնում, կամ որոնց վնաս է հասցվում, համապատասխանաբար մասնակցություն են ունենում կամ օգտագործվում են սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող համատեղ գործունեության մեջ:

4. Կողմերը և (կամ) համատեղ գործունեության մասնակիցները կարող են

առանձին համաձայնագրերի շրջանակներում սահմանափակել սույն հոդվածով նախատեսված՝ պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ պահանջներ ներկայացնելուց փոխադարձ հրաժարման մասին դրույթների գործողության ոլորտը կամ այլ կերպ փոփոխել դրանք՝ այնքանով, որքանով դա կարող է պահանջվել համատեղ գործունեության որոշակի բնույթով: Մասնավորապես, նրանք կարող են համաձայնեցնել պատասխանատվության և վնասի փոխհատուցման բաշխման մասին լրացուցիչ կամ այլընտրանքային դրույթներ համատեղ գործունեության որոշակի տեսակի առնչությամբ:

5. Սույն հոդվածի 1-3-րդ կետերին համապատասխան պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ պահանջներ ներկայացնելուց փոխադարձ հրաժարումը չի տարածվում՝

ֆիզիկական անձին մարմնական վնաս հասցնելու, նրա առողջությանը որևէ այլ լուրջ վնաս հասցնելու կամ այդ անձի մահվան դեպքում փոխհատուցման հետ կապված այն դժգոհությունների վրա, որոնք ներկայացվում են, համապատասխանաբար, այդ անձի կամ դրա իրավունքն ունեցող ցանկացած անձի (այդպիսի ֆիզիկական անձի կտակակատարների, նրա ժառանգների կամ այն անձանց, ում սուբրոգացիայի կարգով փոխանցվում են իրավունքները) կողմից.

այն դժգոհությունների վրա, որոնք ծագում են ցանկացած Կողմի և համատեղ գործունեության մասնակիցների միջև հարաբերություններում, ինչպես նաև՝ համատեղ գործունեության այդ մասնակիցների միջև հարաբերություններում.

մտավոր սեփականության հետ կապված դժգոհությունների վրա.

այն դժգոհությունների վրա, որոնք կապված են կանխամտածված ոչ իրավաչափ գործողությունների կամ կոպիտ անզգուշությամբ կատարված գործողությունների հետևանքով ծագած վնասի հետ.

ուղղակիորեն որպես վերապահում նախատեսված պայմանագրային դրույթների վրա հիմնված դժգոհությունների վրա:

6. Սույն հոդվածի դրույթները բացասաբար չեն անդրադառնում միջազգային իրավունքով սահմանված համապատասխան սկզբունքների և նորմերի կիրառման վրա, մասնավորապես՝ «Տիեզերական օբյեկտներով պատճառված վնասի դիմաց միջազգային պատասխանատվության մասին» 1972 թվականի մարտի 29-ի կոնվենցիայի վրա հիմնված դժգոհությունների մասով:

7. Կողմերն անցկացնում են խորհրդակցություններ այն պատասխանատվությանն առնչվող ցանկացած դեպքի համար, որը կարող է ծագել միջազգային իրավունքին, այդ թվում՝ սույն հոդվածի 6-րդ կետով նախատեսված Կոնվենցիային համապատասխան՝ վնասի փոխհատուցման բեռի բաշխման և հնարավոր դժգոհություններից դատարանում պաշտպանության մասով: Մասնավորապես, փորձագետների և տեղեկատվության փոխանակման միջոցով

Կողմերը համագործակցում են ցանկացած այնպիսի միջադեպի կամ պատահարի առիթով քննություն անցկացնելիս յուրաքանչյուր փաստ արձանագրելու նպատակով, որի դեպքում կարող է ծագել պատասխանատվության հիմք:

8. Կողմերն իրավասու մարմիններին հանձնարարում են ապահովել սույն հոդվածով նախատեսված՝ պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ պահանջներ՝ առանձին համաձայնագրերի կնքման փորձի համապատասխանության վերաբերյալ:

Հոդված 15
Անձնակազմի գործունեությանն աջակցումը

Յուրաքանչյուր Կողմ, իր պետության օրենսդրության համապատասխան, աջակցություն է ցուցաբերում ցանկացած մյուս Կողմի պետության այն քաղաքացիների գործունեությանը, որոնք իր տարածք մուտք են գործում և այնտեղ գտնվում են սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեություն իրականացնելու համար:

Հոդված 16
Վեճերի կարգավորումը

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման առնչությամբ Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգով:

Հոդված 17
Եզրափակիչ դրույթներ

1. Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը կազմող փոփոխություններ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան գրավոր ծանուցումներն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագիրը բաց է ԱՊՀ մասնակից

ցանկացած պետության միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

4. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է դուրս գալու սույն Համաձայնագրից՝ իր մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին: Դուրս գալն իրավական ուժ է ստանում այդ ծանուցումն ստանալու օրվանից 12 ամիսը լրանալուց հետո:

5. Սույն Համաձայնագրի գործողությունը դադարելու դեպքում դրա դրույթները շարունակում են կիրառվել դրա գործողության ժամանակահատվածում մեկնարկած, սակայն դրա գործողությունը դադարելու օրվա դրությամբ չավարտված բոլոր ծրագրերի և նախագծերի նկատմամբ, եթե Կողմերն այլ պայմանավորվածություն ձեռք չեն բերում:

6. Սույն Համաձայնագրի գործողության դադարումն իրավական հիմք չէ դեռևս ուժի մեջ գտնվող ֆինանսական կամ այլ բնույթի պայմանագրային պարտավորությունները միակողմանիորեն վերանայելու կամ դրանք չկատարելուհամար, և դա չի շոշափում իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք ծագել են սույն Համաձայնագրին համապատասխան՝ նախքան դրա գործողության դադարումը:

Հոդված 18
Ուժը կորցնող փաստաթղթերը

Այն Կողմերի միջև հարաբերություններում, որոնց համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտել, դադարում է հետևյալ փաստաթղթերի գործողությունը.

«Տիեզերական տարածության հետազոտմանն ու օգտագործմանն ուղղված համատեղ գործունեության ֆինանսավորման կարգի մասին» 1992 թվականի նոյեմբերի 13-ի համաձայնագիրը.

«Տիեզերքի հարցերով միջպետական խորհրդի մասին» 1992 թվականի նոյեմբերի 13-ի կանոնակարգը հաստատելու մասին արձանագրությունը:

Կատարված է Աստանա քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 2-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը դրա հաստատված պատճենը կուղարկի սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետություն:

Ադրբեջանի Հանրապետության Կառավարության կողմից

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից

Մոլդովայի Հանրապետության Կառավարության կողմից

Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Տաջիկստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Թուրքմենստանի Կառավարության կողմից

Ուզբեկստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Ուկրաինայի Կառավարության կողմից

Հավելված 1
Խաղաղ նպատակներով տիեզերական
տարածության հետազոտման և օգտագործման
ոլորտում Անկախ պետությունների
համագործակցության մասնակից
պետությունների համատեղ գործունեության
իրականացման մասին
2018 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնագրի

Կանոնակարգ
Տիեզերքի հարցերով միջպետական խորհրդի մասին

I. Ընդհանուր դրույթները

1.1. Տիեզերքի հարցերով միջպետական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվել է խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցությունը զարգացնելու և Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների փոխգործակցությունը համակարգելու նպատակով:

1.2. Խորհուրդն ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է իր լիազորությունների սահմաններում և հաշվետու է Անկախ Պետությունների Համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդին:

1.3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրությամբ, ԱՊՀ շրջանակներում ընդունված պայմանագրերով և որոշումներով, «Անկախ պետությունների համագործակցության ճյուղային համագործակցության մարմինների մասին» ընդհանուր Կանոնակարգով, ինչպես նաև սույն Կանոնակարգով:

1.4. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ԱՊՀ գործադիր կոմիտեի, ինչպես նաև ԱՊՀ այլ մարմինների հետ սերտ փոխգործակցության միջոցով:

II. Խորհրդի խնդիրներն ու գործառույթները

Խորհրդի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են.

2.1. Տիեզերական տարածության արդյունավետ հետազոտման և օգտագործման համար միասնական քաղաքականության մշակումը և համագործակցության առաջնահերթ ուղղությունների սահմանումը՝ ելնելով ԱՊՀ մասնակից պետությունների տնտեսության և գիտության ճյուղերի շահերից:

2.2. Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և

օգտագործման ոլորտում համագործակցության իրավապայմանագրային բազայի կատարելագործումը:

2.3. ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից ուսումնասիրություն պահանջող՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման միջպետական ծրագրերի ու նախագծերի մշակմանն առնչվող առաջարկների նախապատրաստումը:

2.4. Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման միջպետական ծրագրերի ու նախագծերի շրջանակներում ԱՊՀ մասնակից պետություններում անցկացվող աշխատանքների համակարգումը:

2.5. Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում միջազգային համագործակցության շուրջ բանակցությունների անցկացումը ԱՊՀ մասնակից պետությունների մասնագետ-փորձագետների մակարդակով և այդ հարցերով համաձայնագրերի (պայմանագրերի) նախագծերի մշակումը:

2.6. Համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացմանն ուղղված աջակցությունը ներդրումների և վարկերի, արտաբյուջետային աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցների ներգրավումը Կողմերի պետությունների տիեզերական ոլորտ:

2.7. Տիեզերական գործունեության ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության առաջնահերթ ուղղություններով միջազգային պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակմանն առնչվող առաջարկների նախապատրաստումը:

2.8. Տիեզերական համատեղ գործունեության հեռանկարային ուղղությունների մասով ԱՊՀ մասնակից պետությունների առաջարկների ուսումնասիրությունը:

2.9. Տեղեկատվական և գովազդային գործունեության կազմակերպման, գիտական, ուսումնական և այլ բնույթի հրատարակությունների թողարկման հարցում փոխգործակցությունը:

2.10. Տիեզերական գիտության և տեխնիկայի զարգացման հարցերով խորհրդակցությունների անցկացումը և կարծիքների փոխանակումը՝ ելնելով ԱՊՀ մասնակից պետությունների շահերից:

2.11. Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում կադրերի մասնագիտական պատրաստմանը, նրանց վերապատրաստմանն ու մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանն աջակցելը:

2.12. Իր իրավասության շրջանակներում տիեզերական միջավայրի պաշտպանության հիմնախնդիրների լուծմանն ուղղված փոխհամաձայնեցված մոտեցումների մշակումը՝ հաշվի առնելով գործող համաշխարհային փորձը:

2.13. Միջազգային գիտական համաժողովների, խորհրդաժողովների, գիտաժողովների, ցուցահանդեսների և տիեզերքի ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների կողմից անցկացվող այլ միջոցառումների կազմակերպմանն աջակցելը:

2.14. Այն վեճերի կարգավորմանն ուղղված խորհրդակցությունների և բանակցությունների անցկացումը, որոնք կարող են ծագել «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունության իրականացման մասին համաձայնագրի մասնակից պետությունների կողմից իրականացվելը կարգավորող միջազգային պայմանագրերի կիրարկման ժամանակ:

2.15. Խորհրդի նպատակների ու խնդիրների իրագործման համար այլ գործառույթներ:

III. Խորհրդի իրավունքները

Իր խնդիրներն ու գործառույթներն իրականացնելու համար Խորհուրդն իրավասու է.

3.1. Նախապատրաստելու և սահմանված կարգով պետությունների ղեկավարների խորհրդի, կառավարությունների ղեկավարների խորհրդի, ԱՊՀ տնտեսական խորհրդի ուսումնասիրությանը ներկայացնելու Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերին վերաբերող փաստաթղթերի նախագծեր:

3.2. Տիեզերական գործակալություններից կամ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գործադիր իշխանության՝ տիեզերական տարածության հետազոտմանն ու օգտագործմանն ուղղված գործունեության համար պատասխանատու մարմիններից, ինչպես նաև ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմիններից սահմանված կարգով հարցմամբ պահանջելու Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերով տեղեկատվություն:

3.3. Ստեղծելու ժամանակավոր աշխատանքային մարմիններ (հանձնաժողովներ, խմբեր)՝ ըստ Խորհրդի գործունեության առանձին ուղղությունների, և անհրաժեշտության դեպքում հաստատելու դրանց առնչվող դրույթներ: Աշխատանքային մարմիններն իրենց գործունեության մասին ամեն տարի հաշվետվություն են ներկայացնում Խորհուրդ:

3.4. Մշակելու և հաստատելու Խորհրդի աշխատանքի կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) և դրա մեջ կատարելու փոփոխություններ:

IV. Խորհրդի կազմավորման կարգը

4.1. Խորհրդի կազմի մեջ մտնում են Կողմերի պետությունների իրավասու մարմինների ղեկավարները:

Կողմի պետություններից յուրաքանչյուրը Խորհրդում ունի մեկ ձայն: Խորհրդի անդամներին փոխարինող անձանց Խորհրդի նիստերին ուղարկելիս նրանց լիազորությունները պետք է հաստատվեն գրավոր:

4.2. Խորհրդի կազմի մեջ խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մտնել Խորհրդի քարտուղարության ղեկավարը և ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

4.3. Խորհրդում նախագահությունը հաջորդաբար իրականացնում է ԱՊՀ յուրաքանչյուր մասնակից պետություն՝ ի դեմս իր ներկայացուցչի, ԱՊՀ մասնակից պետությունների անվանումների ռուսերեն այբբենական կարգով, որպես կանոն, մեկ տարին չգերազանցող ժամկետով, եթե Խորհրդի որոշմամբ այլ բան չի սահմանվում:

Խորհրդի նախորդ և հաջորդ նախագահները դրա համանախագահներն են:

Խորհրդի նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականությունները վերապահվում են համանախագահներից մեկին:

V. Աշխատանքի կազմակերպումը

5.1. Խորհուրդն իր նիստերն անցկացնում է տարին առնվազն մեկ անգամ: Ըստ անհրաժեշտության՝ կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

5.2. Խորհրդի արտահերթ նիստերը կարող են անցկացվել ցանկացած Կողմի պետության առաջարկով, եթե դրան կողմ է Խորհրդի անդամների մեծ մասը:

5.3. Խորհրդի որոշումներն իրավազոր են, եթե նիստին ներկա է Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

5.4. Նիստերի անցկացման վայրը որոշվում է՝ ըստ Խորհրդի անդամների նախնական պայմանավորվածության:

5.5. Խորհուրդն իր աշխատանքը կազմակերպում է աշխատանքների՝ Խորհրդի կողմից մշակվող և հաստատվող տարեկան պլանների հիման վրա, ինչպես նաև ամեն տարի ԱՊՀ գործադիր կոմիտեին է տրամադրում իր գործունեության մասին տեղեկատվություն:

5.6. Խորհրդի որոշմամբ դրա աշխատանքին որպես դիտորդ կարող են մասնակցել Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետությունների շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

5.7. Գործունեության հիմնական հարցերին, ինչպես նաև համատեղ նախագծերի ու գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների

անցկացման մասին այլ փաստաթղթերի հաստատմանն առնչվող Խորհրդի որոշումներն ընդունվում են փոխադարձ համաձայնությամբ (կոնսենսուսով):

Խորհրդի անդամն իրավունք ունի քննարկման դնելու Խորհրդի իրավասության սահմաններում եղող ցանկացած հարց, հասնելու այդ հարցերով որոշումների ընդունման, ստանալու Խորհրդի կողմից ընդունվող որոշումների կատարման մասին անհրաժեշտ տեղեկատվություն:

Խորհրդի ցանկացած անդամ կարող է հայտարարել այս կամ այն հարցում իր հետաքրքրված չլինելու մասին, ինչը Խորհրդի կողմից որոշումներ ընդունվելիս չպետք է դիտվի որպես խոչընդոտ:

Խորհրդի այն անդամները, որոնք համաձայն չեն որոշմանը, կարող են հայտնել հատուկ կարծիք, որն արտացոլվում է նիստի արձանագրության մեջ:

5.8. Խորհրդի այն որոշումները, որոնք անմիջականորեն շոշափում են ԱՊՀ որևէ մասնակից պետության շահերը, չեն կարող ընդունվել այդ պետության ներկայացուցչի բացակայության ժամանակ:

5.9. Նախագահն այդ պաշտոնում ընտրվում է Խորհրդի առաջին նիստի ժամանակ: Նախագահը կազմակերպում է Խորհրդի աշխատանքը, ղեկավարում դրա նիստերը, ապահովում Կանոնակարգի պահպանումը:

5.10. Խորհրդի որոշումներն ստորագրում է Խորհրդի նախագահը:

5.11. Խորհրդի նիստերն անցկացվում են Խորհրդի հաստատած Կանոնակարգին համապատասխան:

5.12. Խորհրդի հերթական նիստի նյութերը դրա անդամներին են ուղարկվում նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ:

5.13. Խորհրդի գործունեության կազմակերպատեխնիկական և տեղեկատվական ապահովումն իրականացնում է դրա քարտուղարությունը:

5.14. Խորհրդի քարտուղարության գործառույթները կցված են այն Կողմի պետության համապատասխան պետական մարմնին, որի ներկայացուցիչը նախագահում է Խորհուրդը՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ:

Խորհրդի քարտուղարության ղեկավարը Խորհուրդը նախագահող պետության համապատասխան պետական մարմնի ներկայացուցիչն է, իսկ քարտուղարության ղեկավարի տեղակալը՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

5.15. Խորհրդի նիստերին ընդունված փաստաթղթերը դրա բոլոր անդամներին ուղարկվում են երկշաբաթյա ժամկետում:

5.16. Խորհրդի և դրա աշխատանքային մարմինների աշխատանքային լեզուն ռուսերենն է:

VI. Եզրափակիչ դրույթներ

6.1. Խորհրդի և դրա աշխատանքային մարմինների նիստերի անցկացումը կազմակերպելու հետ կապված ծախսերը կատարվում են ընդունող ԱՊՀ մասնակից պետության համապատասխան պետական մարմինների միջոցների հաշվին:

Խորհրդի անդամների և նիստի մյուս մասնակիցների, ինչպես նաև աշխատանքային մարմինների ներկայացուցիչների գործուղման ծախսերը կատարվում են ԱՊՀ մասնակից պետությունների՝ համապատասխան ուղարկող պետական մարմինների և կազմակերպությունների կողմից:

6.2. Խորհրդի լուծարման մասին որոշումն ընդունվում է Անկախ Պետությունների Համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից:

Հավելված 2
Խաղաղ նպատակներով տիեզերական
տարածության հետազոտման և օգտագործման
ոլորտում Անկախ պետությունների
համագործակցության մասնակից
պետությունների համատեղ գործունեության
իրականացման մասին 2018 թվականի
նոյեմբերի 2-ի համաձայնագրի

Մտավոր սեփականությունը և գործնական խորհրդապահական տեղեկատվությունը

«Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրի Կողմերը (այսուհետ՝ Համաձայնագիր, Կողմեր), իրենց պետությունների օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան, ապահովում են համագործակցության շրջանակներում ստեղծվող կամ օգտագործվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, ինչը Համաձայնագրի և Համաձայնագրի 7-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված առանձին համաձայնագրերի (այսուհետ՝ առանձին համաձայնագրեր) առարկա է:

Համատեղ գործունեության մասնակիցները միմյանց ժամանակին տեղեկացնում են մտավոր գործունեության բոլոր արդյունքների մասին, որոնք, որպես մտավոր սեփականության օբյեկտ, ենթակա են իրավական պաշտպանության, և անհապաղ փոխգործակցում են այդ պաշտպանությունն ապահովելուն ուղղված այլ ֆորմալ գործընթացների գրանցման և կատարման նպատակներով:

Բաժին 1
Կիրառության ոլորտը

1. Սույն Հավելվածի դրույթները կիրառվում են համատեղ գործունեության բոլոր այն տեսակների նկատմամբ, որոնք իրականացվում են Համաձայնագրին համապատասխան համագործակցելու նպատակով:

2. Սույն հավելվածը կարգավորում է մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների նկատմամբ իրավունքների բաշխումը Կողմերի կամ համատեղ գործունեության մասնակիցների միջև:

3. Սույն հավելվածով չեն փոփոխվում մտավոր գործունեության օբյեկտների

նկատմամբ իրավունքների կարգավորման՝ Կողմերի օրենսդրությամբ և համատեղ գործունեության մասնակիցների ներքին կարգավորման կանոններով սահմանված կարգը, ինչպես նաև ցանկացածԿողմի համատեղ գործունեության մասնակիցների միջև հարաբերությունները կամ ցանկացածԿողմի և դրա համատեղ գործունեության մասնակիցների միջև հարաբերությունները: Սույն հավելվածը բացասաբար չի անդրադառնում Կողմերի միջազգային պարտավորությունների վրա:

4. Համատեղ գործունեության իրականացումը չի շոշափում Կողմերի և (կամ) համատեղ գործունեության մասնակիցների՝իրավունքները նախորդող մտավոր սեփականության նկատմամբ :

5. Համաձայնագրի գործողության դադարեցմամբ չեն շոշափվում նախքան այդ դադարումը սույն հավելվածին համապատասխան ծագած իրավունքներն ու պարտավորությունները:

Բաժին 2
Իրավունքների բաշխումն ու օգտագործումը

1. Մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների նկատմամբ իրավունքների բաշխման և մտավոր սեփականության օգտագործման մասով Կողմերը և համատեղ գործունեության մասնակիցները կիրառում են հետևյալ հիմնական սկզբունքները.

1) մտավոր գործունեության՝ Համաձայնագրի շրջանակներում ստացված և (կամ) օգտագործվող արդյունքների պատշաճ իրավական պաշտպանությունը.

2) մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների նկատմամբ իրավունքները և դրանց օգտագործումից ստացված եկամուտները բաշխելիս Կողմերի և (կամ) համատեղ գործունեության մասնակիցների ունեցած համապատասխան ներդրումները, ներառյալ՝ նախորդող մտավոր սեփականությունը.

3) մտավոր սեփականության արդյունավետ օգտագործումը.

4) համատեղ գործունեության մասնակիցների նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքը.

5) գործնական խորհրդապահական տեղեկատվության պաշտպանությունը.

6) նախորդող մտավոր սեփականության օգտագործումը վերջինիս իրավական պաշտպանությունն ապահովելուց հետո միայն այն պետության տարածքում , որտեղ նախատեսվում է օգտագործել այդ մտավոր սեփականությունը.

7) Կողմերի պետությունների բյուջետային հատկացումների հաշվին ստեղծված՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների խախտումների կանխարգելմանը, հայտնաբերմանը, քննությանը և արգելմանն ուղղված միջոցառումները Կողմերի կողմից պարտադիր իրականացումը.

8) Համաձայնագրի շրջանակներում ստացված և (կամ) օգտագործվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ երրորդ կողմերի (պետությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց)՝ օրենքով նախատեսված իրավունքների խախտումների ճնշում.

9) փոխանցող Կողմի և (կամ) համատեղ գործունեության՝ փոխանցող մասնակիցների կողմից այն դժգոհությունների կարգավորումը, որոնք կապված են Համաձայնագրի շրջանակներում փոխանցված մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքներն այդ Կողմի կողմից և (կամ) համատեղ գործունեության այդ մասնակիցների կողմից ենթադրաբար խախտվելու հետ, և որոնք կարող են ներկայացվել երրորդ կողմերին (պետություններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց) և (կամ) համատեղ գործունեության ստացող մասնակիցներին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն Կողմերը և (կամ) համատեղ գործունեության մասնակիցները, որոնց ներկայացվում են դժգոհություններ, այդ մասին անհապաղ տեղեկացնում են փոխանցող Կողմին և (կամ) համատեղ գործունեության փոխանցող մասնակիցներին:

2. Կողմերը և (կամ) համատեղ գործունեության մասնակիցները համատեղ հիմունքներով մշակում են մտավոր գործունեության արդյունքների գնահատման և օգտագործման պլաններ: Նշված պլանները մշակվում են կա՛մ նախքան համագործակցությունն սկսելը, կա՛մ դրա ընթացքում՝ որևէ Կողմի կամ համատեղ գործունեության մասնակցի կողմից մյուս Կողմի կամ Կողմերի և համատեղ գործունեության մասնակիցների մտավոր գործունեության՝ իրավական պաշտպանության ենթակա արդյունքն ստանալու մասին գրավոր ծանուցելու օրվանից երկամսյա ժամկետում:

Այդպիսի պլանները կազմվում են՝ հաշվի առնելով Կողմերի կամ համատեղ գործունեության մասնակիցների համապատասխան ներդրումները՝ ներառյալ համատեղ գործունեության շրջանակներում փոխանցված նախորդող մտավոր սեփականությունը, և դրանցով սահմանվում են մտավոր սեփականության տեսակներն ու օգտագործման ծավալները, ինչպես նաև Կողմերի պետությունների տարածքում և, անհրաժեշտության դեպքում, երրորդ պետությունների տարածքում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների իրագործման պայմաններն ու կարգը:

Համատեղ գործունեության մասնակիցներն իրավունք ունեն օգտագործելու մտավոր սեփականության՝ համատեղ ստեղծված օբյեկտներն իրենց սեփական կարիքների համար, եթե մտավոր գործունեության արդյունքների գնահատման և օգտագործման պլաններով այլ բան նախատեսված չէ: Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանմամբ՝ Կողմերը և համատեղ գործունեության մասնակիցները մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված

արդյունքների նկատմամբ իրավունքների բաշխման և մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման նպատակներով կարող են սահմանել համատեղ գործունեության պայմաններ առանձին համաձայնագրերի կնքման միջոցով:

3. Կողմերը և համատեղ գործունեության մասնակիցները փոխադարձ պայմանավորվածությամբ որոշում են, թե արդյո՞ք մտավոր գործունեության համատեղ ստեղծված արդյունքները պետք է արտոնագրվեն, գրանցվեն կամ պահվեն գաղտնի: Կողմերը և համատեղ գործունեության մասնակիցները երաշխավորում են մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների մասին տեղեկությունների հրապարակման անթույլատրելիությունը՝ նախքան դրանք գաղտնի պահելու մասին որոշման ընդունումը կամ նախքան այն արդյունքների մասին տեղեկատվության հրապարակումը, որոնք պետք է գրանցվեն կամ արտոնագրվեն որպես մտավոր սեփականության օբյեկտներ:

4. Մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների համար արտոնագրերի տրամադրման հայտերը նախ և առաջ ներկայացվում են այն պետության լիազորված մարմին, որի տարածքում ստեղծվել են այդ արդյունքները:

5. Կողմերից ցանկացածի կամ համատեղ գործունեության ցանկացած մասնակցի խնդրանքով անցկացվում են խորհրդակցություններ՝ երրորդ պետությունների տարածքում համատեղ ստեղծված մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանությունն ու բաշխումն ապահովելու հարցերով՝ սույն բաժնի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի դրույթներին համապատասխան:

6. Որևէ Կողմի՝ մյուս Կողմի կազմակերպությունում աշխատանքի ներգրավված հետազոտողների, գիտնականների և այլ մասնագետների վրա տարածվում են ընդունող կազմակերպության ներքին կարգավորման կանոնները, որոնք առնչվում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքներին, ինչպես նաև այդ իրավունքների հետ կապված հավանական վարձատրություններին և վճարներին՝ այնպես, ինչպես դրանք սահմանված են սեփական հետազոտողների, գիտնականների և մասնագետների համար նախատեսված՝ յուրաքանչյուր ընդունող կազմակերպության ներքին կարգավորման կանոններով: Որպես գյուտարար որակված յուրաքանչյուր հետազոտող, գիտնական կամ այլ մասնագետ իրավունք ունի իր կողմից կատարած ներդրմանը համապատասխան ստանալու մասնաբաժին ընդունող կազմակերպությանը հասանելիք ցանկացած վճարումից, որը լիցենզիայի մասին պայմանագրով նախատեսված է մտավոր գործունեության պահպանվող արդյունքի օգտագործման իրավունքի տրամադրման համար:

7. Հեղինակային իրավունքը տարածվում է այն հրապարակումների վրա, որոնց համար, Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան,

տրամադրվում է իրավական պաշտպանություն: Կողմերը և համատեղ գործունեության մասնակիցները կարող են ընդունել համաձայնեցված որոշում, որով նախատեսվում է, որ Կողմերից յուրաքանչյուրի և համատեղ գործունեության մասնակիցներն ունեն համատեղ գործունեության անմիջական արդյունք հանդիսացող գիտատեխնիկական հոդվածների, դասախոսությունների, զեկույցների, գրքերի և հեղինակային իրավունքով պաշտպանվող այլ ստեղծագործությունների՝ ոչ առևտրային նպատակներով Կողմերի բոլոր պետություններում թարգմանության, վերարտադրության և հանրային տարածման ոչ բացառիկ և անհատույց լիցենզիաների իրավունք: Հեղինակային իրավունքի՝ տարածման ենթակա օբյեկտների բոլոր նմուշների վրա նշվում է հեղինակի ազգանունը, եթե նա չի հրաժարվել իր ազգանունը հստակ կերպով նշելուց կամ չի ցանկացել հանդես գալ կեղծանունով:

8. Համաձայնագրի շրջանակներում մշակված՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար նախատեսված ծրագրերի և տվյալների բազաների նկատմամբ բացառիկ իրավունքը Կողմերի համատեղ գործունեության մասնակիցների միջև բաշխվում է՝ հաշվի առնելով էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար նախատեսված այդպիսի ծրագրերի և տվյալների բազաների մշակման ու ֆինանսավորման հարցում նրանց ունեցած համապատասխան ներդրումները: Կողմերի համատեղ գործունեության մասնակիցների կողմից էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար նախատեսված ծրագրերի կամ տվյալների բազաների համատեղ մշակման կամ համատեղ ֆինանսավորման դեպքում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար նախատեսված ծրագրերի և տվյալների բազաների մասով կիրառվող ռեժիմը, այդ թվում՝ դրանց առևտրային օգտագործման դեպքում օգուտի բաշխումը, սահմանվում են առանձին համաձայնագրերով: Առանձին համաձայնագրերի բացակայության դեպքում կիրառվում են սույն բաժնի 2-րդ և 3-րդ կետերում նախատեսված՝ համատեղ գործունեության հետ կապված իրավունքների բաշխմանն առնչվող դրույթները:

9. Մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների նկատմամբ իրավունքների տրամադրումը երրորդ անձանց, այդ թվում՝ երրորդ պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձանց, առանձին համաձայնագրերի առարկա է, որոնք կնքվում են նախօրոք՝ մինչև դրանց տրամադրումը:

Բաժին 3
Գործնական խորհրդապահական տեղեկատվությունը

1. Գործնական խորհրդապահական տեղեկատվությունը, որպես այդպիսին, սահմանվում է պատշաճ կերպով: Գործնական խորհրդապահական

տեղեկատվությունը սահմանելու պատասխանատվությունը վերապահվում է այն Կողմին կամ համատեղ գործունեության այն մասնակցին, որը նման խորհրդապահական բնույթ է պահանջում: Կողմերից յուրաքանչյուրը կամ համատեղ գործունեության մասնակիցն այդ տեղեկատվությունը պաշտպանում է իր պետության օրենսդրության պահպանմամբ և առանձին համաձայնագրերում սահմանված պայմաններին համապատասխան:

2. Համատեղ գործունեության մասնակիցները գործնական խորհրդապահական տեղեկատվությունը կարող են փոխանցել սեփական ներկայացուցիչներին (ծառայողներին) առանձին համաձայնագրերում այլ բան նախատեսված չլինելու դեպքում: Այդպիսի տեղեկատվությունը կարող է փոխանցվել կապալառուներին և ենթակապալառուներին՝ նրանց հետ ունեցած առանձին համաձայնագրերի կիրառության ոլորտի սահմաններում: Այդ կերպով փոխանցված տեղեկատվությունը կարող է օգտագործվել միայն առանձին համաձայնագրերի կիրառության ոլորտի սահմաններում, որոնցով պետք է նախատեսվեն խորհրդապահական բնույթի մասին այդպիսի դրույթների կիրառման պայմաններն ու ժամկետները:

3. Կողմերը և համատեղ գործունեության մասնակիցները ձեռնարկում են խորհրդապահական բնույթն ապահովելու՝ սույն բաժնով նախատեսված պարտավորությունները կատարելուն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները:

Հավելված 3
«Խաղաղ նպատակներով տիեզերական
տարածության հետազոտման և
օգտագործման ոլորտում Անկախ
պետությունների համագործակցության
մասնակից պետությունների համատեղ
գործունեության իրականացման մասին
2018 թվականի նոյեմբերի 2-ի
համաձայնագրի

Արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանությանն ուղղված միջոցները

Բաժին 1
Կիրառության ոլորտը

1. Սույն հավելվածի դրույթները համատեղ գործունեության բոլոր տեսակների և փուլերի նկատմամբ կիրառվում են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով, մասնավորապես՝

համատեղ գործունեության մասնակիցների բոլոր օբյեկտներում.

այն օբյեկտներում, որոնք գտնվում են Կողմերի պետությունների իրավազորության և (կամ) հսկողության ներքո.

Կողմերի պետությունների ներկայացուցիչների գործողությունների մասով.

արտահանող (ներմուծող) Կողմի լիազորված պաշտոնատար անձանց գործողությունների մասով:

2. «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում համատեղ գործունեության իրականացման մասին» 2018 թվականի նոյեմբերի 2-ի համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) իրագործելիս Կողմերը պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանվածության ու անվտանգության ապահովման մասով համագործակցում են երրորդ պետությունների կառավարությունների և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան իրավասությամբ օժտված միջազգային կազմակերպությունների հետ՝ ըստ Համաձայնագրի պայմանների պայմաններով: Այդ նպատակին հասնելու համար և սույն հավելվածի 3-րդ բաժնի 1-ին կետում և 10-րդ բաժնի 7-րդ կետում շարադրված պահանջները հաշվի առնելով՝ Կողմերն իրենց իրավասու և լիազորված մարմինների համաձայնեցված առաջարկությունների հիման վրա Համաձայնագիրը կիրառում են պահպանվող այն արտադրատեսակների և տեխնոլոգիաների նկատմամբ, որոնք ունեն երրորդ պետությունների ծագում, և որոնց համար երրորդ

պետություններում պետական մարմինների կողմից տրվում են արտահանման այնպիսի լիցենզիաներ (թույլտվություններ) և (կամ) այլ թույլտվություններ, որոնք Համաձայնագրով և սույն հավելվածով նախատեսված պայմանների ու ընթացակարգերի հետ առավելագույն հնարավոր չափով համադրելի պայմաններն ու ընթացակարգերը կատարելու համար տրվում են երրորդ պետությունների կառավարությունների և (կամ) միջազգային կազմակերպությունների հետ փոխադարձ հիմունքներով գրավոր համաձայնագրեր կնքելու կամ պայմանավորվածություններ ձեռք բերելու միջոցով:

Բաժին 2
Տեխնոլոգիաների պահպանության պլանները

1. Կողմերն իրենց իրավասու և լիազորված մարմինների միջոցով ապահովում են, որ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով ցանկացած համատեղ գործունեություն յուրաքանչյուր Կողմի պետության ներկայացուցիչների կողմից իրականացվի արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանության պլաններով նախատեսված ընթացակարգերի համաձայն, և որ այդպիսի պլանները դիտարկվեն որպես պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանվածության ու անվտանգության ապահովման միջոցների հաշվառման համակարգի անբաժանելի մաս:

2. Տեխնոլոգիաների պահպանության պլանները մշակվում են Կողմերի համատեղ գործունեության մասնակիցների կողմից՝ Համաձայնագրին համապատասխան, և ենթակա են հաստատման յուրաքանչյուր Կողմի իրավասու և լիազորված մարմինների կողմից, նախօրոք՝ մինչև պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով համատեղ գործունեությունն սկսելը:

Նշված պլանները պետք է պարունակեն առնվազն հետևյալ պարտադիր տեղեկությունները.

1) պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների բեռնման (բեռնաթափման) մասով գործողությունների իրականացման կարգը, ինչպես նաև անձնակազմի՝ աշխատանքային գոտիներ մուտք գործելու կարգը.

2) այն ընթացակարգերը, որոնցով պետք է առաջնորդվել պահպանվող արտադրատեսակների արձակումը հապաղելու, չեղարկելու կամ դրանք անհաջող արձակելու դեպքերում.

3) տեխնիկական հսկողության մեթոդներն ու համակարգերը պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերաբերյալ գրանցումները.

4) պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների փոխադրման դեպքում պատասխանատվության փոխանցման ժամը, վայրը և ընթացակարգերը.

5) պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանության ապահովմանը և, անհրաժեշտության դեպքում, ուտիլիզացմանն առնչվող ընթացակարգերը:

3. Կողմերն իրենց իրավասու և լիազորված մարմինների միջոցով համագործակցում են արտադրատեսակների ու տեխնոլոգիաների պահպանության պլանների կատարման նկատմամբ արդյունավետ և ժամանակին հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու մասով:

Բաժին 3
Լիցենզիաների գործողությունը

1. Արտահանող Կողմն իր իրավասու և լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով ապահովում է պահպանվող արտադրատեսակներին ու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջների և անհրաժեշտ դեպքերում հրթիռային տեխնոլոգիայի չտարածման պահանջների պահպանումը՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով արտահանման լիցենզիաներ և (կամ) այլ թույլտվություններ տրամադրելու, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված պատշաճ միջոցներ իրականացնելու միջոցով, և իր իրավասու և (կամ) լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով տեղեկացնում է ներմուծող Կողմին՝ նրա իրավասու և լիազորված մարմինների (նրա լիազորված մարմինների) միջոցով այդպիսի արտահանման լիցենզիաների և (կամ) այլ թույլտվությունների դրույթների մասին:

Ներմուծող Կողմն իր իրավասու և լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով ապահովում է պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջների և, համապատասխան դեպքերում, հրթիռային տեխնոլոգիայի չտարածման պահանջների պահպանումը՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով ներմուծման լիցենզիաներ և (կամ) այլ թույլտվություններ, միջազգային ներմուծման հավաստագրեր, վերջնական օգտագործողի հավաստագրեր և (կամ) այլ թույլտվություններ տրամադրելու, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված պատշաճ միջոցներ իրականացնելու միջոցով, և իր իրավասու և (կամ) լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով տեղեկացնում է արտահանող Կողմին՝ նրա իրավասու և լիազորված մարմինների

(նրա լիազորված մարմինների) միջոցով այդպիսի ներմուծման լիցենզիաների, վերջնական օգտագործողի հավաստագրերի և այլ թույլտվությունների դրույթների մասին:

Կողմերը համաձայն են, որ վերաարտահանող Կողմն իր իրավասու և լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով ապահովի պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջների ու, համապատասխան դեպքերում, չտարածման պահանջների պահպանումը՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով արտահանման լիցենզիաներ (թույլտվություններ) և (կամ) այլ թույլտվություններ տրամադրելու, ինչպես նաև երրորդ պետությունների կառավարությունների հետ այն գրավոր համաձայնագրերի և պայմանավորվածությունների կատարման համար պատշաճ միջոցներ իրականացնելու միջոցով, որոնցով պետք է նախատեսվեն պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ առնչվելու՝ սույն հավելվածով նախատեսված պայմանների և ընթացակարգերի հետ առավելագույն հնարավոր մակարդակով համադրելի պայմաններ:

2. Կողմերը գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը սույն բաժնի 1-ին կետում նշված՝ Կողմերի պետություններում տրված փաստաթղթերի անընդհատ գործողությունն ապահովելու համար՝ այդ փաստաթղթերով նախատեսված պայմաններով:

3. Եթե Կողմերից յուրաքանչյուրն իր իրավասու և (կամ) լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով պարզի, որ Համաձայնագրի որևէ դրույթ, այդ թվում՝ տեխնոլոգիաների պահպանության պլաններին վերաբերող մասով, կարող էր խախտվել, կամ տիրապետի այնպիսի տեղեկությունների, որոնք որոշակիորեն կմատնանշեն այդպիսի խախտման հավանականություն ենթադրող հանգամանքներ, Կողմն իր իրավասու և (կամ) լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով կարող է կասեցնել իր իսկ արտահանման լիցենզիայի գործողությունը կամ հետ վերցնել լիցենզիան, ինչպես նաև սահմանափակումներ սահմանել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների արտահանման (վերաարտահանման) և համապատասխան ծառայությունների մատուցման նկատմամբ: Կողմերն իրենց իրավասու և (կամ) լիազորված մարմինների միջոցով անհապաղ անցկացնում են հետագա փոխգործակցություն իրականացնելու և կազմակերպական ու իրավական բնույթի միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ՝ ստեղծված իրավիճակին համապատասխան խորհրդակցություններ, այդ թվում՝ մորատորիում կամ արգելք են սահմանում համատեղ գործունեության բոլոր կամ դրա առանձին տեսակների իրականացման նկատմամբ:

4. Համաձայնագրում ոչինչ չի սահմանափակում համատեղ գործունեության լիցենզավորման և (կամ) համատեղ գործունեություն իրականացնելու թույլտվության մասով իրենց պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան ցանկացած գործողություն ձեռնարկելու և (կամ) ցանկացած որոշում ընդունելու Կողմերի լիազորությունները:

Եթե արտահանող Կողմը պարզի, որ երրորդ պետության կառավարության և (կամ) միջազգային կազմակերպության հետ վերաարտահանող Կողմի համաձայնագրի որևէ դրույթ, այդ թվում՝ արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանության պլաններին վերաբերող մասով, կարող էր խախտվել, կամ տիրապետի այնպիսի տեղեկությունների, որոնք որոշակիորեն կմատնանշեն այդպիսի խախտման հավանականություն ենթադրող կամ Համաձայնագրով և սույն հավելվածով նախատեսված՝ պահպանվող արտադրատեսակների ու տեխնոլոգիաների հետ առնչվելու պայմանների և ընթացակարգերի իրականացումը ոչ պատշաճ ապահովելու մասին ենթադրող հանգամանքներ, արտահանող Կողմը կարող է կասեցնել իր իսկ արտահանման լիցենզիայի (սեփական թույլտվության) գործողությունը կամ հետ վերցնել լիցենզիան, ինչպես նաև համապատասխան սահմանափակումներ սահմանել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների արտահանման (վերաարտահանման) նկատմամբ:

5. Համատեղ գործունեություն իրականացնելու լիցենզիաների և այլ թույլտվությունների տրամադրման, կասեցման կամ հետ վերցնելու կարգը պետք է համապատասխանի Համաձայնագրի նպատակներին և պահանջներին: Յուրաքանչյուր Կողմ, գործելով իր իրավասու և (կամ) լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով, ձեռնարկում է համատեղ գործունեության մասնակիցների լուծարման կամ վերակազմակերպման դեպքում Համաձայնագրի կատարման մասով մյուս Կողմերից յուրաքանչյուրի, մյուս Կողմերից յուրաքանչյուրի պետության ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ:

6. Իր պետությունում տրամադրված լիցենզիայի կամ համատեղ գործունեության՝ իր կողմից տրամադրված թույլտվությունը կասեցնելու կամ որևէ Կողմից հետ վերցվելու դեպքում և կամ համատեղ գործունեությունն ավարտելուն պես ներմուծող Կողմը չի խոչընդոտում և անհրաժեշտության դեպքում աջակցում է արտահանող Կողմի պետության տարածք կամ արտահանող Կողմի կողմից հաստատված այլ վայր պահպանվող արտադրատեսակներն ու տեխնոլոգիաներն անհապաղ վերադարձնելուն:

Բաժին 4

Վերջնական օգտագործման հավաստագրումը

1. Կողմերը, Համաձայնագրի կատարման կարգի համաձայն, ապահովում են համատեղ գործունեության իրականացման շրջանակներում պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերջնական օգտագործման համապատասխանությունն այն դիմումներին, որոնք համատեղ գործունեության մասնակիցները, որպես ներմուծողներ և վերջնական օգտագործողներ, տրամադրում են Կողմերի իրավասու և (կամ) լիազորված մարմիններին:

2. Կողմերը ներմուծողներ և վերջնական օգտագործողներ համարվող համատեղ գործունեության մասնակիցներին պարտավորեցնում են Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության պահպանման հետ մեկտեղ ձևակերպել և արտահանող Կողմին ներկայացնել ներմուծող Կողմի լիազորված պաշտոնատար անձանց կողմից ստորագրված և ներմուծող Կողմի իրավասու կամ լիազորված մարմնի (լիազորված մարմինների) կողմից պաշտոնապես վավերացված՝ վերջնական օգտագործողների հավաստագրերը, իսկ երրորդ պետության պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերաարտահանման դեպքում՝ երրորդ պետության կառավարության անունից լիազորված պաշտոնատար անձանց կողմից ստորագրված և երրորդ պետության համապատասխան իրավասու մարմնի (համապատասխան իրավասու մարմինների) կողմից պաշտոնապես վավերացված՝ վերջնական օգտագործողների հավաստագրերը, որոնցով համատեղ գործունեության մասնակիցները և, համապատասխան դեպքերում, համատեղ գործունեության մեջ ներգրավված երրորդ պետությունների ֆիզիկական ու իրավաբանական անձինք պարտավորվում են՝

1) արտահանող Կողմի պետության տարածքից դուրս հանվող (արտահանվող)՝ պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաներն օգտագործել միայն համատեղ գործունեության իրականացման՝ նախապես համաձայնեցված նպատակներով.

2) չիրականացնել, թույլ չտալ և կանխել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների կամ դրանց ածանցյալների մոդիֆիկացումը, պատճենումը, վերարտադրությունը (վերարտադրումը), հետադարձ նախագծումը (կառուցվածքի մշակումը, վերականգնումը), արդիականացումը (ինչպես արտահանող Կողմի պետությունում արտադրված արտադրատեսակների, այնպես էլ ցանկացած այլ արտադրատեսակի, հանգույցի և բաղադրիչ մասի օգտագործմամբ), վերաարտահանումը՝ ներառյալ իր պետության տարածքից համատեղ գործունեության այդպիսի մասնակիցների կողմից վերահսկվող իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործակիցների կամ գործընկերների հասցեով արտահանումը, կամ այդպիսի պահպանվող

արտադրատեսակների և տեխնոլոգիաների ցանկացած այլ հետագա փոխանցում երրորդ երկրներին կամ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց՝ առանց արտահանող Կողմի նախնական գրավոր համաձայնության և նրա պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված պետական մարմինների կողմից համապատասխան լիցենզիայի (համապատասխան թույլտվության) տրամադրման:

3. Վերջնական օգտագործողի հավաստագրի տեքստը կազմվում է արտահանող Կողմի՝ ներմուծող (վերաարտահանող) Կողմի այն երաշխիքների մասով պահանջները հաշվի առնելով, որոնցով ապահովվում է, որ պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաներն օգտագործվեն միայն հայտարարված նպատակներով ու ենթակա չլինեն հետագա փոխանցման՝ առանց արտահանող Կողմի իրավասու մարմնի և լիազորված մարմինների գրավոր թույլտվության:

4. Ներմուծող (վերաարտահանող) Կողմն իր իրավասու և (կամ) լիազորված մարմինների (իր լիազորված մարմինների) միջոցով արտահանող Կողմին անհապաղ տեղեկացնում է համատեղ գործունեության մասնակցից ստացված՝ վերջնական օգտագործողի հավաստագրում շարադրված փաստերի կամ մտադրությունների ցանկացած փոփոխության վերաբերյալ տեղեկությունների մասին՝ ներառյալ այն փոփոխությունները, որոնք վերաբերում են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերջնական օգտագործմանը, պատճենմանը կամ մոդիֆիկացմանը՝ ի նկատի ունենալով, որ այդպիսի ընթացակարգն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների և (կամ) լիազորված մարմինների միջոցով, և փաստերի կամ մտադրությունների այդպիսի փոփոխությունները արտահանող Կողմի իրավասու կամ լիազորված մարմնի (լիազորված մարմինների) գրավոր հաստատման բացակայության դեպքում չի դիտարկում որպես իրավաչափ: Առանձին համաձայնագրերի և պայմանավորվածությունների միջոցով Կողմերը երրորդ պետությունների կառավարությունների հետ փոխհարաբերություններում ապահովում են այդպիսի կարգի պահպանումը:

5. Վերջնական օգտագործողի հավաստագիրը՝ ներմուծող Կողմի պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված պետական մարմնի կողմից հաստատվելուց հետո համատեղ գործունեության մասնակցին է ուղարկվում որպես ներմուծողի՝ արտահանող Կողմի իրավասու և (կամ) լիազորված մարմիններ (լիազորված մարմիններ) այն հետագայում ներկայացնելու համար:

Բաժին 5
Հսկողության և ուղեկցման գործառույթները

1. Կողմերը Կողմերի պետություններում տրամադրված արտահանման լիցենզիաների և (կամ) իրենց կողմից տրամադրված թույլտվությունների կատարման

պայմանների մշտական պահպանումն ապահովելու համար համապատասխան հարցման առկայության դեպքում խորհրդապահությունը պահպանելու դեպքում փոխադարձ հիմունքներով ընձեռում են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ առնչվելու կարգի հետ կապված տեսչական ստուգում անցկացնելու հնարավորություն: Այդպիսի տեսչական ստուգումներ օպերատիվ կերպով անցկացնելու ղեկավար սկզբունքները և մանրամասն գործընթացները համաձայնեցվում են Կողմերի իրավասու և (կամ) լիազորված մարմինների կողմից բեռն առաքողների հետ համատեղ:

2. Կողմերի պետությունների ներկայացուցիչներն իրավունք ունեն մշտական հիմունքներով իրականացնելու Կողմերի համապատասխան պետություններին պատկանող՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ոչ զինված ուղեկցում Կողմերի մյուս պետություններից յուրաքանչյուրի տարածքում դրանց գտնվելու ժամանակ: Կողմերի պետությունների ներկայացուցիչներն իրենց լիազորություններն իրականացնում են և այդպիսի պահպանվող արտադրատեսակների ու տեխնոլոգիաների հետ առնչվելու նկատմամբ հսկողության ու վերահսկողության, տեսչական ստուգման ու կարգավորման գործառույթները կատարում են սույն հավելվածին համապատասխան: Պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները երրորդ պետություններ վերաարտահանելու դեպքում Կողմերը երրորդ պետությունների կառավարությունների հետ համաձայնագրերի և պայմանավորվածությունների շրջանակներում նախատեսում են նշված լիազորությունների՝ Կողմերի կողմից իրականացում և համատեղ գործունեության մասնակիցներին հանձնարարում են նախատեսել Կողմերի պետությունների ներկայացուցիչների այդպիսի իրավունք:

3. Հաշվի առնելով պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների առնչությամբ իրականացվող կոնկրետ համատեղ գործունեության բնույթը՝ Կողմերի պետությունների ներկայացուցիչները Կողմերի մյուս պետություններից յուրաքանչյուրի տարածքում իրենց գործունեությունը կարող են իրականացնել ծրագրերի և նախագծերի կառավարման հատուկ միասնական կամ առանձին՝ բեռն առաքողների կողմից ստեղծվող ծառայությունների շրջանակներում:

Կողմերն իրենց իրավասու և լիազորված մարմինների միջոցով միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ համատեղ գործունեության միայն այն մասնակիցները, որոնց՝ պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվելու ընթացակարգեր իրականացնելու իրավունքը հաստատված է արտահանող Կողմի պետությունում գործող կարգով, շուրջօրյա հսկեն արտահանվող պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հասանելիությունը դրանց տրանսպորտային փոխադրման, պահպանման, դրանց հետ կապված ցանկացած տեխնոլոգիական աշխատանքի կատարման ամբողջ ընթացքում, համապատասխան

դեպքերում՝ ներառյալ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերադարձն արտահանող Կողմի պետության տարածք կամ արտահանող Կողմի կողմից հաստատված այլ վայր՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով այդ Կողմի պետությունում տրված արտահանման լիցենզիաների (թույլտվությունների) և (կամ) այլ թույլտվությունների պայմաններին համապատասխան:

4. Ներմուծող Կողմն անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերում արտահանող Կողմի ներկայացուցիչներին՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով համատեղ գործունեություն իրականացնելու ու նրանց կողմից Համաձայնագրի շրջանակներում իրենց իրավունքները և գործառույթները ժամանակին իրականացվելու նպատակներով իր պետության տարածք մուտք գործելու և իր պետության տարածքում գտնվելու առումով:

Բաժին 6
Մուտքին առնչվող ղեկավար սկզբունքները

1. Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ աշխատանքն իրականացվում է դրանց անհրաժեշտ պաշտպանությունն ապահովող պայմաններում: Պաշտպանության աստիճանը սահմանվում է արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից՝ հաշվի առնելով պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների բնույթը: Համատեղ գործունեության՝ արտահանող և ներմուծող Կողմի մասնակիցների փոխադարձ պայմանավորվածությամբ ստեղծվում են պաշտպանված գոտիներ, որոնց մուտքը սահմանափակվում և (կամ) հսկվում է արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից:

2. Հաշվի առնելով սույն բաժնի 1-ին կետը՝ Կողմերը, գործելով իրենց իրավասու և լիազորված մարմինների միջոցով, համատեղ գործունեության մասնակիցներին հանձնարարում են մշակել, կիրառել և պահպանել ընթացակարգերը, ինչպես նաև օբյեկտներ, շինություններ և տրանսպորտային միջոցներ կամ բացառապես պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ աշխատանքներ կատարելու համար հատուկ առանձնացված՝ պաշտպանված գոտիներ կարգավորվող մուտքի ապահովման համակարգը՝ նկատի ունենալով, որ այդպիսի կարգավորվող մուտքի իրավունքը տրամադրվում է ներմուծող Կողմի ներկայացուցիչների պահանջով՝ արտահանող Կողմի ներկայացուցիչների թույլտվությամբ և ներկայությամբ:

3. Հաշվի առնելով սույն բաժնի 1-ին և 2-րդ կետերի դրույթները Կողմերը որպես հիմք են ընդունում այն, որ սույն բաժնի 2-րդ կետում նշված՝ օբյեկտներ, շինություններ, տրանսպորտային միջոցներ կամ պաշտպանված գոտիներ մուտքը

կազմակերպելու նկատմամբ կիրառվող հիմնական պահանջները ներառում են՝

1) բոլոր ներս մտնող (դուրս եկող) այն ֆիզիկական անձանց նույնականացումը, որոնք իրենց մոտ պետք է ունենան համապատասխան ձևով գրանցված անցագրեր և կրծքին փակցվող նույնականացման քարտեր.

2) համապատասխան տարածք մուտքին և այնտեղ գտնվելուն վերաբերող կանոնների կատարման նկատմամբ հսկողություն և դիտարկում՝ տեխնոլոգիական գործառույթների խախտման և պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ կապված կողմնակի միջամտության դեպքերի բացակայության մեջ վստահ լինելու նպատակով.

3) պաշտպանության, ընթացակարգերի ամբողջ համակարգի գործունեության և անհրաժեշտ կանխարգելիչ և՝ շտկման միջոցների ձեռնարկման ժամանակին լինելու հանգամանքի կանոնավոր կերպով կամ ըստ անհրաժեշտության գնահատում:

4. Արտահանող Կողմը, իր իրավասու և լիազորված մարմինների (լիազորված մարմինների) միջոցով, համատեղ գործունեություն իրականացնելիս ապահովում է պահպանվող արտադրատեսակների ու տեխնոլոգիաների մասով արտահանման լիցենզիաների և (կամ) այլ թույլտվությունների՝ արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից պահպանումը:

Ներմուծող Կողմը, իր իրավասու և լիազորված մարմինների (լիազորված մարմինների) միջոցով, համատեղ գործունեություն իրականացնելիս ապահովում է ներմուծման լիցենզիաների (թույլտվությունների), վերջնական օգտագործողի հավաստագրերի և (կամ) պահպանվող արտադրատեսակների ու տեխնոլոգիաների մասով այլ թույլտվությունների պայմանների՝ ներմուծող Կողմի ներկայացուցիչների կողմից պահպանումը:

5. Կողմերն իրենց իրավասու և (կամ) լիազորված մարմինների միջոցով ժամանակին միմյանց ծանուցում են արտահանող Կողմի՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ու դրանց ուղեկցման նկատմամբ հսկողության իրավունքի իրականացման անհնարինության հանգեցնող ցանկացած գործողության մասին, որպեսզի պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանվածության ու անվտանգության ապահովման միջոցների մասով ձեռք բերեն պատշաճ պայմանավորվածություններ:

Բաժին 7
Նախազգուշացնող մակնշվածքը

Կողմերը համատեղ գործունեության մասնակիցներից պահանջում են, որ բոլոր պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները մակնշվեն ու ուղեկցվեն ծանուցումներով կամ այլ կերպ հատուկ նշվեն:

Այդպիսի մակնշվածքներում կամ ծանուցումներում նշվում են այն կոնկրետ պայմանները, որոնցով պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաներն օգտագործվում են համատեղ գործունեության շրջանակներում, ինչպես նաև դրանցում պարունակվում է պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների նկատմամբ ցանկացած չարտոնված գործողության արգելքի մասին նախազգուշացում՝ Համաձայնագրին համապատասխան:

Բաժին 8
Արտահանումը և տրանսպորտային փոխադրումը

1. Արտահանող Կողմի ներկայացուցիչները համապատասխան Կողմի իրավասու և (կամ) լիազորված մարմիններին (լիազորված մարմիններին) ժամանակին տեղեկացնում են նրա պետության տարածք պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ներմուծման ու նրա տարածքով դրանց տեղափոխման բոլոր անհրաժեշտ թույլտվություններն ստանալու նպատակով ներմուծող (վերաարտահանող) Կողմի ներկայացուցիչների կողմից ներկայացված և ձևակերպված դիմումների հետ կապված գործերի վիճակի մասին: Արտահանող Կողմը պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների արտահանումը (էքսպորտ) պայմանավորում է թույլտվությունների նախնական ստացմամբ և տեխնոլոգիաների պահպանության համապատասխան պլանները գործողության մեջ դնելով:

2. Արտահանող Կողմի պետության տարածքից ներմուծող Կողմի պետության տարածք և ներմուծող Կողմի պետության տարածքից արտահանող Կողմի պետության տարածք կամ արտահանող Կողմի կողմից հաստատված այլ վայր պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ցանկացած տրանսպորտային փոխադրման համար պետք է նախօրոք ստանալ արտահանման լիցենզիաներ և (կամ) Կողմերի և (կամ) դրանց իրավասու և (կամ) լիազորված մարմինների կողմից տրվող այլ թույլտվություններ՝ արտահանման հսկողության ոլորտում Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տրանսպորտային փոխադրումն իրականացվում է տեխնոլոգիաների պահպանության պլաններում շարադրված՝ դրանց պահպանությանն ուղղված միջոցների ապահովման դեպքում: Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տրանսպորտային փոխադրման գործողություններն իրենց պետությունների տարածքներով իրականացնելու վերաբերյալ Կողմերի համաձայնությունը ներառում է Համաձայնագրի հետ համատեղելի այն բոլոր անհրաժեշտ հատուկ

սահմանափակումները և պայմանները, որոնք առնչվում են տրանսպորտային փոխադրման կոնկրետ հանգամանքներին, ինչպես նաև՝ արտակարգ իրավիճակների դեպքում կիրառելու համար մշակված գործողությունների պլանները:

Բաժին 9
Մաքսային գործառնությունները

Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների խմբին դասվող ապրանքների մաքսային հսկողությունը և դրանց առնչությամբ իրականացվող մաքսային գործառնությունների իրականացումը կատարվում է Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը և սույն Համաձայնագրին համապատասխան:

Ներմուծող Կողմի պետության մաքսային մարմիններին տրամադրվում են արտահանող Կողմի լիազորված մարմնի գրավոր երաշխիքներն այն մասին, որ կնքված բեռնարկղերում և այլ փաթեթվածքներում չի պարունակվում որևէ բեռ, որը չի վերաբերում սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեությանը և, որպես այդպիսին, հայտարարագրված չէ:

Կողմերի պետությունների մաքսային մարմինները պահպանում են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների զննում անցկացնելու իրենց իրավունքը: Ընդ որում, Կողմերը որպես հիմք են ընդունում այն, որ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ներմուծման (արտահանման) հետ կապված մաքսային կանոնների խախտումների փաստերի կամ հատկանիշների բացակայություն ենթադրող բնականոն հանգամանքների դեպքում պետք է ձեռնպահ մնալ մաքսային զննումից՝ ներմուծող Կողմի լիազորված մարմնի՝ ներմուծող Կողմի պետության մաքսային մարմիններին ուղղված համապատասխան դիմումի առկայության դեպքում: Այլ հանգամանքներում զննումն անցկացվում է պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին, ինչպես նաև պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հասկացության մեջ մտնող տեխնիկական տվյալներին վնաս հասցնելու ռիսկի բազմակողմանի գնահատականը հաշվի առնելով, ինչպես նաև իրավասու և (կամ) լիազորված մարմինների կողմից համաձայնեցված և հաստատված այնպիսի մեթոդներով և միջոցներով, որոնք վնաս չեն հասցնում դրանց, չեն բացահայտում և չեն պատճենում դրանց տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերն ու պարամետրերը (մասնավորապես՝ տեխնոլոգիական փաթեթվածքի ամբողջականության և հերմետիկության ու ֆիզիկական վիճակի պահպանման դեպքում):

Բաժին 10
Գույքի իրավական և ֆիզիկական պաշտպանությունը

1. Արտահանվող պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում և կառավարվում են համատեղ գործունեության մասնակցի կողմից, ներմուծող Կողմի պետության տարածքում և այդ պետության իրավազորության և (կամ) հսկողության ներքո գտնվող օբյեկտներում օժտված են առգրավման ցանկացած ձևից և տեսակից կամ կատարողական վարույթից, ինչպես նաև հարկադրանքի այնպիսի միջոցներից, ինչպիսիք են նշված ապրանքների կատեգորիաների վրա բռնագանձման տարածումը կամ դրանց կալանքը՝ մինչև դատական որոշման կայացումը:

Իրավազորության մասով անձեռնմխելիությունը չի գործում այն դեպքերում, երբ արտահանող Կողմը սույն բաժնի դրույթների կիրառման կարգով կոնկրետ դեպքում հրաժարվում է այդպիսի անձեռնմխելիությունից, մասնավորապես՝ արտահանման լիցենզիաների և (կամ) պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով՝ արտահանող Կողմի պետությունում տրամադրված այլ թույլտվությունների պայմանները չկատարելու դեպքում արտահանող Կողմի խնդրանքով պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները համատեղ գործունեության՝ ներմուծող Կողմի մասնակցից առգրավելու և պահպանվող արտադրատեսակներն ու տեխնոլոգիաները Համաձայնագրի սկզբունքներին և նորմերին համապատասխանող պահպանության հանձնելու անհրաժեշտության դեպքում: Պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները չեն օգտագործվում որպես գրավ կամ ապահովման այլ միջոց այն դեպքում, երբ ընթանում է համատեղ գործունեության՝ Կողմերից ցանկացածի մասնակցի գործունեության նկատմամբ վարույթ կամ քննություն համատեղ գործունեության ընթացքում ցանկացած պարզված կամ ենթադրվող խախտման առնչությամբ: Համապատասխանաբար, ներմուծող Կողմի պետության պետական իշխանության մարմինների որոշման հիման վրա կամ այդ պետության նկատմամբ դատարանում իրականացվող քննության հետ կապված՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների նկատմամբ հարկադրանքի ոչ մի միջոց (օրինակ՝ բռնագանձում, արգելադրում, ռեկվիզիցիա կամ առգրավում) չի կարող կիրառվել:

2. Ներմուծող Կողմը պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով իր պետությունում գործող լիցենզիաներ կամ այլ թույլտվություններ տրամադրելու ընթացակարգերի շրջանակներում ձեռնարկում է իրավական բնույթի բոլոր անհրաժեշտ միջոցները, որ համատեղ գործունեության՝ իր մասնակցի մոտ օգտագործման կամ կառավարման համար գտնվող պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները արտահանող Կողմի թույլտվությամբ և արտահանող Կողմի բեռնառաքողի հետ ձեռք բերված համաձայնությունների հիման վրա երաշխավորված լինեն վաճառքից, վարձակալության (ենթավարձակալության)

հանձնումից, գրավ դրվելուց, որպես սեփականություն օտարումից կամ արտահանման պայմանների խախտմամբ այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հավատարմագրային կառավարման փոխանցումից: Համատեղ գործունեության՝ արտահանող և ներմուծող Կողմերի մասնակիցների միջև պայմանագրային պարտավորությունների մասով վեճերի առաջացման դեպքում պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները չեն կարող լինել որևէ պարտավորության ապահովման միջոց կամ այլ կերպ ծանրաբեռնված լինել:

3. Այնպիսի իրավական դեպքեր և (կամ) փաստեր առաջանալու դեպքում, որոնք հիմք են հանդիսացել կամ կարող են հիմք հանդիսանալ պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող բողոքի կամ հայցի համար, արտահանող և ներմուծող Կողմերն իրենց իրավասու և (կամ) լիազորված մարմինների միջոցով և, անհրաժեշտության դեպքում, դիվանագիտական ուղիներով անհապաղ խորհրդակցություններ են անցկացնում՝ այդպիսի բողոքներից կամ հայցերից պաշտպանության համար իրավական և գործնական բնույթի բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու նպատակներով:

4. Սույն բաժնի դրույթները չեն տարածվում պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով պատշաճ վարչական գործառույթների իրականացման վրա՝ ներմուծող Կողմի պետության տարածքով դրանց տեղափոխման և նրա տարածքում Համաձայնագրի հետ համատեղելի ընթացակարգերին համապատասխան օգտագործման առնչությամբ:

5. Իրավազորության մասով անձեռնմխելիության սկզբունքը սույն բաժնին համապատասխան ապահովելու նպատակով արտահանող և ներմուծող Կողմերն առաջնորդվում են համաձայնեցված ընթացակարգերով ու կատարման վերաբերյալ կարգադրությունների կիրառման փորձով, որոնք կարող են հանգեցնել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տեղափոխման կամ օգտագործման նկատմամբ, մասնավորապես, վարչական բնույթի մորատորիումների սահմանման՝ հետևյալի մասով հիմնավորված որոշում կայացվելու դեպքում՝

1) մաքսային իրավախախտումների դեպքի և հանցակազմի առկայության հետևանքով մաքսային գործառնությունների իրականացումը և պահպանվող առանձին արտադրատեսակների և տեխնոլոգիաների բացթողումը կասեցնելու մասով.

2) պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների՝ ներմուծող Կողմի պետության տարածքով տեղափոխման և նրա տարածքում օգտագործման նկատմամբ սահմանափակումներ սահմանելու մասով, եթե Համաձայնագրին համապատասխան, դրանց հետ անվտանգ առնչվելուն կարող է վնաս հասցվել, ինչպես նաև վտանգ սպառնալ անվտանգությանը, հասարակական կարգին, մարդու կյանքին և առողջությանը և (կամ) շրջակա միջավայրին.

3) համատեղ գործունեության շրջանակներում տրամադրվող ցանկացած ռեսուրս և ծառայություն շրջանառելու և օգտագործելու մասին կոնկրետ որոշումներ ընդունելու համատեքստում՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ սահմանափակումներ սահմանելու մասով.

4) պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող՝ ոչ օրինաչափ գործողությունների հետ կապված քննչական կամ դատավարական գործողություններ կատարելու մասով.

5) համանման պայմանների, սահմանափակումների կամ պարտավորությունների կատարման հետաձգման (մորատորիում) կիրառման մասով:

6. Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների գողության կամ որևէ այլ անօրինական զավթման կամ այդպիսի գործողությունների իրական վտանգի դեպքում ներմուծող Կողմն ապահովում է առավելագույն համագործակցություն՝ օգնություն ցուցաբերելով դրանց պաշտպանության և վերադարձի հարցում, և միջոցներ է ձեռնարկում պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների նկատմամբ արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից արդյունավետ հսկողությունն անհապաղ ու ամբողջ ծավալով վերականգնելու համար:

Ներմուծող Կողմի պետության օրենսդրության շրջանակներում՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների նկատմամբ կատարված իրավախախտման փաստը հաստատող ապացույցները որոշելու և հավաքելու, քրեական հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձին մեղադրանքներ առաջադրելու, ինչպես նաև նրա գործողությունների հետևանքով հասցված վնասը որոշելու նպատակներով իրականացվող իրավապահ միջոցառումների ընթացքում ներմուծող Կողմի պետության իրավապահ մարմինների կողմից ապահովվում է պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների՝ սահմանափակ հասանելիությամբ գոտի (վայր) ժամանակավոր պահպանության հանձնումը պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների նկատմամբ արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից մշտական ուղեկցում և հսկողություն ապահովելու դեպքում: Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ այդ կերպ անվտանգ առնչվելը որևէ ձևով էապես չի սահմանափակում պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաներն անվտանգ պահպանության հանձնելու և անվտանգ պահպանության մեջ գտնվելու ժամանակ դրանց նկատմամբ անընդհատ հսկողության, վերահսկողության, տեսչական ստուգման և կարգավորման անհրաժեշտ պահպանության միջոցներ իրականացնելու՝ արտահանող Կողմի ներկայացուցիչների լիազորությունները:

7. Համաձայնագրի, երրորդ պետությունների հետ համաձայնագրերի և պայմանավորվածությունների կատարման շրջանակներում Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ երրորդ պետություններ վերաարտահանվող

պահպանվող արտադրատեսակների ու տեխնոլոգիաների և երրորդ պետությունների կողմից արտահանվող (երրորդ պետություններից ներմուծվող) ու Կողմերի պետություններ վերաարտահանվող պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերաբերյալ՝ սույն բաժնում շարադրված սկզբունքների և նորմերի կիրառումը:

Բաժին 11
Տրանսպորտային փոխադրման, պահպանման կամ արձակման ժամանակ վթարային իրավիճակը

1. Այն դեպքում, երբ արտահանող Կողմի պետության կամ ներմուծող Կողմի պետության իրավազորության գործողության շրջանակներում՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տրանսպորտային փոխադրման, պահպանման կամ տիեզերական տարածք արձակման ժամանակ տեղի է ունենում վթարային իրավիճակ, այդ Կողմերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի համագործակցեն պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ցանկացած և բոլոր բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների) որոնման և հավաքման մասով որոնողական-փրկարարական կամ վթարային աշխատանքների անցկացման պատշաճ համատեղ միջոցներ և համաձայնեցված տեխնիկական մեթոդներ սահմանելու, ինչպես նաև այդպիսի աշխատանքներ անցկացնելու կարգի և պայմանների վերաբերյալ գործնական բնույթի բոլոր անհրաժեշտ պայմանավորվածությունները ձեռք բերելու հարցում:

2. Արտահանող և ներմուծող Կողմերն ապահովում են համագործակցության իրականացում պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ցանկացած և բոլոր բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների)՝ վթարի բոլոր տեղամասերում որոնմանը, նույնականացմանը և հավաքմանն աջակցելու նպատակներով՝ արտահանող Կողմի ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ:

3. Ներմուծող Կողմը թույլ է տալիս իրականացնել արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից նույնականացված՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների) տարհանում այդ ներկայացուցիչների մշտական հսկողությամբ և ուղեկցմամբ: Տարհանումն իրականացվում է առանց որևէ ուսումնասիրության և (կամ) որևէ լուսանկարահանում կամ տեսանկարահանում անցկացնելու ու առանց այնպիսի այլ միջոցների կիրառման, որոնք կարող են օգտագործվել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տեխնիկական ու տեխնոլոգիական բնութագրերը և պարամետրերը բացահայտելու համար:

4. Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների բոլոր բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների) որոնման ու հայտնաբերման մասով որոնողական-փրկարարական կամ վթարային աշխատանքների ժամանակին և արդյունավետ կատարումն ապահովվում է այն միջոցառումների միջոցով, որոնք ներառում են՝

1) արտահանող և ներմուծող Կողմի ներկայացուցիչների կողմից փոխադարձ հիմունքներով համաձայնեցված՝ վթարային և որոնողական-փրկարարական աշխատանքներ իրականացնելու մեթոդների, գործունեության տեսակների, սարքավորումների ու ընթացակարգերի օգտագործում.

2) վթարային և որոնողական-փրկարարական աշխատանքների պլանավորմանն ու անցկացմանը վերաբերող բոլոր հարցերի լուծման ժամանակ արտահանող և ներմուծող Կողմերի ներկայացուցիչների միջև մշտական հիմունքներով կապի և համագործակցային հարաբերությունների պահպանում.

3) վթարային ու որոնողական-փրկարարական աշխատանքների կատարման կարգին փոխադարձ հիմունքներով մշտապես հետևելու համար արտահանող և ներմուծող Կողմերի ներկայացուցիչների կողմից պայմանների ապահովում:

5. Պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ցանկացած ու բոլոր բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների) որոնման, հայտնաբերման և հավաքման մասով որոնողական-փրկարարական աշխատանքներ անցկացնելու ժամանակ արտահանող և ներմուծող Կողմերը, սույն բաժնի 4-րդ կետը հաշվի առնելով, առավելագույն ջանքեր են գործադրում հետևյալ պայմաններն ապահովելու համար.

1) ներմուծող Կողմի ներկայացուցիչները չեն իրականացնում արտահանող Կողմի պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների որևէ բաղադրիչի և (կամ) բեկորի (ֆրագմենտների) լուսանկարահանում կամ տեսանկարահանում և չեն կիրառում այլ միջոցներ, որոնք կարող են օգտագործվել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների տեխնիկական ու տեխնոլոգիական բնութագրերը և պարամետրերը բացահայտելու համար.

2) պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերաբերյալ բոլոր տեղեկություններն ի սկզբանե (մինչև դրանց կատեգորիայի վերաբերյալ վերջնական համատեղ որոշման ընդունումը) դիտարկվում են որպես խորհրդապահական՝ ըստ իրենց բնույթի.

3) արտահանող Կողմի ներկայացուցիչներն անցկացնում են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների կոնկրետ բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների) նույնականացում և ներմուծող Կողմի ներկայացուցիչներին տեղեկացնում են այն արդյունքների մասին, որոնք հիմք են հանդիսանում այդպիսի բաղադրիչները և (կամ) բեկորները (ֆրագմենտները)

պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների խմբին դասելու համար.

4) արտահանող Կողմի ներկայացուցիչները ներմուծող Կողմի ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո իրականացնում են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հայտնաբերված և նույնականացված բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների) առաջնային մշակում, հաշվառում և համակարգում, ինչպես նաև արխիվացնում են նշված բաղադրիչներին և (կամ) բեկորներին (ֆրագմենտներին) առնչվող հավաքված տեղեկությունները:

6. Այն դեպքում, երբ հիմքեր կան եզրակացնելու, որ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների բաղադրիչների և (կամ) բեկորների (ֆրագմենտների) որոնումն ու հավաքումն առնչվում են Համաձայնագրի մյուս մասնակից Կողմերի կամ երրորդ պետության շահերին, արտահանող և ներմուծող Կողմերը Համաձայնագրի համապատասխան մասնակից Կողմերից յուրաքանչյուրի և երրորդ պետության կառավարության հետ համատեղ անհապաղ խորհրդակցություններ են անցկացնում վթարային և որոնողական-փրկարարական աշխատանքներ անցկացնելու այնպիսի ընթացակարգերի համակարգման հարցերի վերաբերյալ, որոնցով, միջազգային իրավունքին համապատասխան, չեն խախտվում բոլոր շահագրգիռ պետությունների իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում՝ այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք առաջանում են «Տիեզերագնացներին փրկելու, տիեզերագնացներին վերադարձնելու և տիեզերական տարածություն արձակված օբյեկտները վերադարձնելու մասին» 1968 թվականի ապրիլի 22-ի համաձայնագրի հիման վրա:

7. Արտահանող և ներմուծող Կողմերն իրենց բեռնառաքողներին լիազորում են, Կողմերի պետությունների օրենսդրության համաձայն, տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են վթարի կամ անհաջող արձակման պատճառը որոշելու համար:

Բաժին 12
Օրենսդրությամբ սահմանված միջոցառումներն անցկացնելու հարցում համագործակցությունը

1. Օրենսդրությամբ սահմանված միջոցառումները ներմուծող Կողմի պետության տարածքի այն օբյեկտներում, շինություններում և տրանսպորտային միջոցներում կամ պաշտպանված գոտիներում իրականացնելու համար, որտեղ գտնվում են պահպանվող արտադրատեսակները և տեխնոլոգիաները, արտահանող և ներմուծող Կողմերն իրենց իրավասու և (կամ) լիազորված մարմինների միջոցով պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների անվտանգությունն

ապահովելու նպատակով համաձայնեցված հիմունքներով կիրառում են այդպիսի միջոցառումների անցկացման համար իրականացվող կարգավորվող մուտքի ընթացակարգը՝ հաշվի առնելով իրենց բոլոր մասնակիցների պարտավորությունները: Միջոցառումների անցկացման վայր այդպիսի մուտքն իրականացվում է հետևյալ պայմաններն ապահովելու դեպքում.

1) օրենսդրությամբ սահմանված միջոցառումներն անցկացվում են բացառապես օրենսդրությամբ լիազորված պաշտոնատար անձանց կողմից՝ սույն բաժնի պահանջների ապահովման դեպքում.

2) օրենսդրությամբ լիազորված պաշտոնատար անձինք օրենսդրությամբ սահմանված միջոցառումներն անցկացնելու վայր այցելելու իրենց իրավունքն իրականացնում են արտահանող Կողմի ներկայացուցիչների ներկայությամբ.

3) ներմուծող Կողմն ապահովում է, որ օրենսդրությամբ լիազորված պաշտոնատար անձինք իրենց գործունեությունը պլանավորելու ժամանակ՝

որպես առաջնային նշանակության գործոն՝ ուշադրություն դարձնեն պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների անվտանգության ապահովմանը վերաբերող բոլոր տեսակետներին և գործեն՝ հաշվի առնելով այն սահմանափակումները և պահանջները, որոնք արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից սահմանվել են պահպանվող արտադրատեսակներ և տեխնոլոգիաներ մուտք գործելու նկատմամբ.

օրենսդրությամբ սահմանված միջոցառումներն այնպես իրականացնեն, որ դրանք կապված չլինեն պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ առնչության կարգավորման մեջ միջամտություն դրսևորելու հետ և ռիսկի չենթարկեն պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվող իրենց գործառույթները կատարելու՝ արտահանող Կողմի ներկայացուցիչների հնարավորությունները.

նվազագույնի հասցնեն և հնարավորինս բացառեն արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից համատեղ գործունեության շրջանակներում իրականացվող՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ ընթացիկ ու պլանավորվող աշխատանքները խափանելու և անհարմարություններ պատճառելու դեպքերը.

օրենսդրությամբ սահմանված միջոցառումների անցկացման նպատակով օգտագործեն այնպիսի մեթոդներ, տեխնիկական միջոցներ և ընթացակարգեր, որոնց առնչությամբ առկա է արտահանող Կողմի ներկայացուցիչների համաձայնությունը՝ հաշվի առնելով Համաձայնագրի և սույն հավելվածի նպատակների հետ այդպիսի մեթոդների, տեխնիկական միջոցների և ընթացակարգերի համատեղելիությունը:

2. Արտահանող Կողմն ապահովում է, որ արտահանող Կողմի

ներկայացուցիչներն աջակցեն օրենսդրությամբ սահմանված միջոցառումների օպերատիվ կերպով անցկացմանը և դրանց նպատակների ապահովմանը:

3. Հաշվի առնելով սույն բաժնի 1-ին և 2-րդ կետերը՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների անցկացման վայր կատարվող ցանկացած այցի նախորդում են՝

1) օրենսդրությամբ սահմանված միջոցառումների անցկացման վայր այցելելու վերաբերյալ պաշտոնապես հարցում ներկայացնելը.

2) օրենսդրությամբ սահմանված միջոցառումների (այդ թվում՝ լուսանկարահանման և տեսանկարահանման) անցկացման կարգի մասին արտահանող Կողմի ներկայացուցիչների հետ բոլոր անհրաժեշտ այն պայմանավորվածությունների ձեռքբերումը, որոնցում հատուկ ձևով հաշվի են առնվում պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների անվտանգությանն առնչվող կոնկրետ հարցեր.

3) արտահանող Կողմի ներկայացուցիչների կողմից գործնական բնույթի անհրաժեշտ այն միջոցների ձեռնարկումը, որոնք ուղղված են պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների անվտանգության ապահովմանը օրենսդրությամբ սահմանված միջոցառումների անցկացման ընթացքում:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. նոյեմբերի 2-ին ստորագրված «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն